



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ. ՏԱՐԻ - ՄԱՐՏ 1938



14^{me} Année - Mars 1938



Խմբագրական Հոյս.	Յ. Ն. Ղ.
Հոգ. կեանք Փողոցներու վրայ ժողով.	Թրգմ. Ն. Մ.
Շնորհաց յովհն Խոժի համար վկաներ պետի ըլլալ.	Եմիկէ Արովան
Շողեր եւ Շաղեր կենաց ածուներէն Հարմանալի դարձ մը — Նոր սիրտ մը Թող լուսաւորէ ձեր լոյսը.	Հաւաքեց' վեր. Ժ. Կ. Պ.
Ս. Գրական սերտողութիւն Մարմնաւոր հաւատացեալ, հոգեւոր հաւա- տացեալ.	Scofieldէն
Մեղաց Գերիներ Անգութը.	Սամուէլ Պ.
Պատմական Գրիգոր Լուսաւորիչ.	Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
Ընտանեկան Մովսէս Մարգարէին Մայրը.	Վեր. Ե. Քասունի
Պատանեաց Քանի մը յանձնադրութիւններ պատանի Քրիստոնեաներու համար.	Ա. Պատաքեան
Ջանազան Լուրեր Բաց նամակ Բանբերի Խմբագրութեան.	***
Երգ Երբ որ Փեսան գայ.	Յ. Ն. Ղ.

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը
կը վնասեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնական Յշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չհանդիսար ու եւ յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէլի մէջ 16 էջերով (կողքէն դատ)
անոր խմբագրական մարմնին անդամներն են

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՄՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
ԲՐՈՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ



ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
սարկելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:
Յօդուածաշարքեր միեւեւ, որ ամբողջութիւնով խմբագրութեան
ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթեռնելի եւ մեկնումով գրուած
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոխախտութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան ըստ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապալու համար:



ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի Յունուարին
եւ կը վերջանայ Գեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
Արտասահման Տուր 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՑԱՏՐՈՒԹԻԻՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:

Յօդուածներ զրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
խիկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով:—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère

MARSEILLE (France)

Մանտայով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արմենի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ

Քանզի: ալ աս-
կէ քիչ մը տաննէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Եբր. Գ. 1

Եբր. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1938

ԹԻԻ 5



Ի՞նչ են հաւատացեալները



ԼՈՅՍ

Դուք էք աշխարհի լոյսը:
Մատթ. Ե 14

ԼՈՅՍԸ ու անոր գործառնութիւնը, անոր
ձգած ազդեցութիւնը ճանչնալու ու նաեւ
հաւատացելոց որպէս լոյս աշխարհի հետ ունե-
ցած առնչութիւնը հասկնալու համար պէտք է
զիմենք նախ լուսոյ աղին:

Յովհաննու Աւետարանին Ա. 1—4 համարնե-
րուն մէջ կը կարգանք թէ ի սկզբանէ էր «Բանը»
որուն ձեռքով ստեղծուեցաւ նաեւ երկիրք ու
երկիր և ամէն բան: Կեանքը Անով էր (աւելի
ճիշդ է կարգաւ... Անոր մէջ էր կեանք) և կեանքը
մարդոց լոյսն էր:

Սուրբ Հոգին հիասքանչ փայլունութիւնով մը
կը լուսաւորէ առաքեալին սիրտն ու միտքը՝
գեղեցիկ թելերով յարմարապէս ազուցանելու իր
աւետարանը Ծննդոցի, որով նաեւ Հին Կտակա-
րանը նորին հետ, նոյնացնելով իր ներկայացու-
ցած «Բանը»՝ Քրիստոս, Ծննդոցի Արարիչ Աս-
տուծոյն հետ. (Բազմ. Յովհ. Ա. 1—4, Ծննդ. 1—3ի
հետ): Ան ի լուսաբանութիւն նկատի առնենք
նաեւ թէ Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց
(պարա) (Ծննդ. Ա. 1), նոյնպէս մարդը ստեղծեց
(պարա), սակայն լոյսին մասին ներշնչեալ
պատգամը մեզի հետեւեալ կերպով կը տեղեկա-
զրէ. «Աստուած ըսաւ. լոյս ըլլայ, ու լոյս եղաւ»:
Ուրեմն լոյսը յայտնաբերուեցաւ Աստուծոյ խօս-
քով (Բանով): Ուրեմն «Բան»ը Իրմէ դուրս եղող
տեսանելի տիեզերքին Ինքզինքը լուսոյ միջո-
ցաւ յայտնեց: Ո՛չ նոյն բառերով, ո՛չ ալ նոյն
իմաստով, սակայն նոյն շաւիղին վրայ Բանը
ինքզինքը կ'արտայայտէ Յովհ. Ա. 4-էջ որպէս

հոգեւոր լոյս: «Կեանքը Անով էր ու կեանքը
մարդոց լոյսն էր»: Ասիկա լրումն է հին մարգարէ-
ութեանց: (Ես. ԽԲ 6, ԽԺ 6, 3): «Ահա Քեզ ազ-
քերուն լոյս պիտի դնեմ»: Այս լոյսը միապաղաղ
կը լուսաւորէ հետեւեալ խօսքով. Ես եմ աշխար-
հի լոյսը (Յովհ. Ը 12, Թ 5):

Այս պրպտումները մեզի ցոյց կուտան թէ
լոյսը խորհրդանշանն է, արդարութեան, սիրոյ
և սրբութեան, իսկ խաւարը մեղքի ու ան-
բարշտութեան և կորուստի:

Ուրեմն այս անհրաժեշտ նախաբանը վերջա-
ցենք եզրակացնելով թէ «Բան»ը Ինքզինքը կը
յայտնաբերէ Նոր Կտակարանին մէջ, իբր լուսոյ
զօրութիւն ի մարդկութեանս, հոգեւոր մարդին
մէջ՝ ճանչցնելու գրարին և դատապարտելու
զշարը:

Սակայն թէեւ Ինք աշխարհի լոյսն է (հոգե-
ւորապէս), երբեք Ինքզինքը չհակասեր, իրեն
հաւատացող աշակերտներն ալ լոյս կոչելով.
«Դուք էք աշխարհի լոյսը»:

Արդ, ծանօթանալով լոյսին, հոգեւոր լոյսին
(Քրիստոսի) և անոր ցոլացումին (հաւատացեա-
լին), անդրադառնանք լուսոյ գործառնութեան և
Անով գիտնանք նաեւ մեր կոչումն ու պաշտօնը
և տեսնենք թէ ի՞նչպէս կրնանք զայն օգտա-
կարապէս գործածել:

ա. Լոյսը կ'երեւի, Քրիստոս յայտնուեցաւ
մարդկութեան, հաւատացեալը կ'երեւի (քաղաք
մը որ լեբան վրայ կեցած է, չկրնար պահուիլ):
Ասիկա այնպիսի վիճակի մը մէջ է, որ ընդու-

նակ է լուսոյ հիւլէները առնելու և զանոնք արտացոլացնելու նաեւ իր մէջ գտնուած նիւթերու այրումով: Խաչին բարձունքէն հոսած սիրոյ ճառագայթը լուսաւորած է իր էութիւնը. մեղաւորը ճանչցած է ինքզինքը, տեսած է իր մեղքը, պըժպացեր է ինքն իրմէ, վա՛յ ինծի ահա կը կորսուիմ ըսած և տեսած է որ Աստուածորդին հո՛ն խաչին վրայ կը կախուի բուն իսկ իր մեղքին համար: Հաւատացեր է Անոր և Անոր փոխանորդական մահուան: Ստացեր է վստահութիւն մեղքերու թողութեան և վերստին ծնունդի: Ստացեր է կեանք ու յաւիտենական կեանք. արգարութիւն ու սրբութիւն: Կ'ապրի Քրիստոսի հետ եւ Անոր մէջ՝ յարութեան կեանքը, քան զի իր բոլոր կեանքը Անոր լոյսին տակ է: Կ'ապրի նա յաղթական կեանքը, քան զի Քրիստոսն է իր կեանքը: Այսպէս հաւատացեալը կ'երեւի որպէս Քրիստոսի մէկ յուշարձանը, վկայութեան կոթողը: Ան վառուած ճրագ մըն է, կանթեղ մը, պատրոյգ մը, լոյս մը՝ ի փառս Իր Տէրոջ: Անիկա զատուած մըն է աշխարհէ, ընտրուած մը Աստուծոյ ձեռքին մէջ և Անոր համար կը լուսաւորէ իրը մեծ ջան մը եկեղեցիներու և մեծ սրահներու մէջ, կը լուսաւորէ տան մը մէկ անկիւնը: Կը լուսաւորէ ուրախութեան և խնջոյքի տուններու մէջ, կը լուսաւորէ հիւանդին սնարին քով, կը լուսաւորէ ամենէն խոր և խոնաւ կոյուղիներու մէջ, կը լուսաւորէ ովկեանի ամենաբարձր ժայռերուն ու խութերուն վրայ: Կը լուսաւորէ իր Փրկչին հրամանին համաձայն: Կը լուսաւորէ կեանքի համար:

բ. Լոյսը կը ցուցնէ. Քրիստոս կը ցուցնէ, հաւատացեալը կը ցուցնէ: Լոյսը կը ցուցնէ իրերն ու կենդանիները ճիշդ իրենց իսկութեամբ և իրենց վիճակին մէջ: Քրիստոսի խաչէն ճառագայթող լոյսը ցոյց կուտայ մեղաւորին իր մեղքն ու մեղաւորութիւնը: Հոն, այդ լոյսի փառաւորութեան առջեւ մեղաւորը ինքզինքը չկրնալ ծածկելով, իր պժգալի վիճակին առջեւ, կ'աղաղակէ, ի՛նչ խղճալի մարդ եմ ես, ո՞վ պիտի ազատէ զիս այս մահացու մարմինէն: Աստուծոյ զաւակաց գործն է ցոյց տալ Պօղոսի ու Շիլայի նման իրենց գիշերային օրհնաբանական երգով, որպէս զի աշխարհ տեսնէ և ազաղակէ. «Տէրեր ինծի ի՛նչ պէտք է ընել որ փրկուիմ»:

գ. Լոյսը կ'առաջնորդէ, Քրիստոս կենաց առաջնորդն է, «Ուրիշ ոչխարներ ալ ունիմ... զանոնք ալ պէտք է որ բերեմ» կ'ըսէ. Եւսեբիոս առաջնորդներ ենք՝ ֆիկորսուածներուն՝ Փրկիչը ցոյց տալու: Յովհաննէս Մկրտիչը սաւ իր աշա-

կերտներուն. «Ահա՛, Աստուծոյ Գառը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ: Պօղոս և Շիլա ըսին, «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսի ու պիտի փրկուիս»»: Անդրէաս իր եղբայրը Սիմոն «տարաւ Յիսուսի»: Բու և իմ գերերջանիկ պաշտօնն է յողնած և փնտռող հոգիները Յիսուսի առաջնորդել:

դ. Լոյսը կը սնուցանէ. Գիտութիւնը կ'ըսէ թէ լոյսը անհրաժեշտ սնունդ մըն է երկրի, բոյսերու և կենդանեաց: Յիսուս կենաց հացն է, Անիկա կենդանի ջուրն է, «Ո՛վ որ Իմ մարմինս ուտէ և Իմ արիւնս խմէ, յաւիտենական կեանք կ'ունենայ»: Մենք ալ կը սնուցանենք: Պօղոս առաքեալ քրիստոնիկեցեաց սնուցանող դայեակ մը, անոնց կեանքին համար ջանք ընող եղբայր մը և յոր զորող հայր մը եղաւ (Ա. Թեա. Բ. 7, 9, 11): Կորնթացեաց մէջ ալ զայն որպէս ստնտու կը գտնենք (Ա. Կոր. Գ. 2) և ընդհանուր եկեղեցիին կատարելութեան համար ալ ջանացող ուսուցիչ մը (Կող. Ա. 27-29, Եփ. Գ. 16-21):

Այս գործը ամէն մէկ հաւատացեալին գեղեցիկ գործն է իր ընտանիքին մէջ, իր զաւակաց հանդէպ, իր գործատեղիին, իր բարեկամներուն, ընկերներուն ու յարաբերած շրջանակներուն մէջ:

ե. Լոյսը կը մաքրէ. Բոլոր առողջապահութեան վարդապետները զայս կը հաւաստեն, բուսաբանութիւնն ալ ոչոյնը կը հաստատէ: Մարդս արեւը, լայնարձակ տեղը կը փնտռէ, կեանքի նորոգման և երկարակեցութեան համար — լոյսին տակ արիւնը կը մաքրուի, մարմինը կը մաքրուի կը վերականգանանայ:

Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամեն մեղքէ կը սրբէ, քան զի ինք «մեր մեղքերը Իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց, որպէս զի մենք մեղքերէն ազատինք»: «Ամեն բան արիւնով կը մաքրուի... ու արիւն չթափուած թողութիւն չըլլար»: «Քրիստոսի արիւնը պիտի սրբէ ձեր խղճմանքը մեռած գործերէն»:

Մենք հաւատացեալներս զեպաններ ենք Աստուծոյ, Քրիստոսի այս քաւաքար գործին համար վկայութիւն տալու:

զ. Լոյսը կը բժշկէ. Ներկայ բժշկութիւնը լոյսը միջոց կը գործածէ անականալ բժշկութեանց համար: Յիսուս ալ այս աշխարհի վրայ հիւանդներ բժշկեց հրաշալիօրէն: Նոյնպէս Անոր վէրքերովը մենք (հոգեւորապէս) բժշկուեցանք: Այս բժշկութիւնը Սատու Սուրտար Սինկհ ամենամեծ հրաշքը կը սեպէ իրաւամբ: Յիսուս այս օր ալ նոյնպէս կը բժշկէ զանոնք որ կը հաւատան: Հաւատացեալներս այս բանին վկաներն ենք

եւ անուղղակի բժիշկներ, քան զի մեր վկայութիւնը պատճառ կ'ըլլայ շատերու՝ գալու բացուած աղբիւրին և բժշկուելու:

Է. Լոյսը կը վիրաւորէ եւ կ'սպաննէ. Լոյսը միայն չապրեցներ, այլ հակառակ ազդեցութիւնն ալ կ'ընէ: Քիչ չեն օրինակներ, որոնց մէջ տեսած ենք թէ Լոյսով աչքեր վիրաւորուած նոյնիսկ կատարելապէս կուրցած են: Հայ մեծ գիտնական Բրօֆ. Քասապեան X ճառագայթներու գոհ գնաց: Տէր Յիսուս Լոյս է: Անոր համար ծերունի Սիմէոն ըսաւ որ. «Անիկա շատ մարդոց իյնալուն ու ելլելուն համար և հակառակութեան նպատակ մը ըլլալու համար կեցած է»: «Անիկա գայթակղութեան քարն է»: «Ով որ այս քարին վրայ իյնայ, պիտի կոտորի, և որո՞ւ վրայ որ իյնայ, պիտի փսորէ գանիկա» Մատթ. ԻՍ 44: Հաւատացեալներս ալ նոյն վէճէն խմած ըլլալով՝ Անոր ազդեցութիւնը կը գործենք աշխարհի մէջ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մենք Աստուծոյ առջեւ Քրիստոսի անոյշ հոտն ենք փրկուածներուն մէջ և կուրսուածներուն մէջ, ոմանց մահուան հոտ ղէպ ի մահ» (Բ. Կոր. Բ 15): Մենք Անով ենք ինչ որ ենք: Ան գմեղ այսպէս ըրաւ: Ան ըսաւ մեզի. «Դուք էք աշխարհի Լոյսը»: Մենք Լոյս ենք և չգարմանանք, երբ մեր ներկայացուցած ջինջ Լոյսին տակ մահամերձներ մեռնին:

Ինչ մեծ պատասխանատուութիւն... սակայն փառաւոր ու բազմակողմանի պաշտօն մըն է Լոյս ըլլալը: Այս բաներուն ո՞վ բաւական է, կ'ըսեն սիրելի ընթերցողներս, ես ալ ըսած եմ և Պօղոս առաքեալ մեզմէ առաջ ըսաւ:

Ուրեմն քանի որ այս այսպէս է, ու չփոխուիր, քեզի և քնծի կը մնայ ահով ու դողով մեր պաշտօնին գիտակից ու հաւատարիմ ըլլալ: Լոյս ըլլալ, ո՛չ թէ մուխ. ո՛չ թէ մխացող պատրոյզ մը:

Յաւալի է որ շատ մը հաւատացեալներ, նոյնիսկ տեղական եկեղեցիներ այս մութ պատկերը ցոյց կուտան: Ասոնք մեզի չափանիշ չեն: Տէրը կ'ըսէ. «Այնպէս թող լուսաւորէ ձեր Լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն... ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է»... «Որպէս զի քարոզէք Անոր առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն Իր սքանչելի Լոյսին կանչեց»:

Մտածենք Լոյսին այս եօթը յատկութիւններուն վրայ և ջանանք իբր Լոյս ապրիլ: Ասոր համար կը մնայ մեզի կրկին նուիրում մարմինի, շունչի և հոգիի և Տէրոջմէ խնդրել որ զանոնք գործածէ Իր փառքին համար և երթալ Գառնուկին ետեւէն ո՛ւր որ Ան երթայ:

Յ. Ն. Ղ.



ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԱՊՐԻԼ

Զգուշացէ՛ք Շուներէն

ՓԷԼ. 3, 2, 3

Արեւելքի մէջ ամենածանօթ երեւոյթ մըն է հանդիպիլ շուներու խմբակներու՝ որ անտուն ու անտէր փողոցները կը թափառին, դուրս նետուած աւելցուքներով ու աղտեղութիւններով կը սնանին, իրարու հետ կը կռոււտին ու անցորդներուն վրայ կը յարձակին: Այս թափառաշրջիկ կեանքէն կ'առնէ Պօղոս իր արտայայտութեան ոճը: Հրեաները կը սիրէին այս ոճով արտայայտել հեթանոս աշխարհի վիճակին նկատմամբ իրենց ունեցած գաղափարը: Բոլոր անոնք որ իրենցմէ տարբեր ցեղի մը կը պատկանէին՝ տուն չունէին, փողոցները կ'ապրէին, աղտեղութեամբ ու աւելցուքով կամ թէ խնճոքներով փշրանքներով կը սնանէին: Սակայն Առաքեալը հակառակ ուղղութեամբ կը գործածէ հոս այս ոճը: Անիկա այս ոճով կը նկարագրէ Հրեային վիճակը: Կ'ամբաստանէ Հրեաները: Կ'ըսէ՝ Դուք էք որ փողոցները կ'ապրիք, դուք էք որ արտաքին բաներով գոհ կ'ըլլաք ու հոգեւոր սնունդի փշրանքներով կը բաւականանաք: Մարմինի կեանքին աւելի կ'արեւորութիւն կուտաք ու հոգւոյն սրբարանը կ'անտեսէք: Շատ աւելի կը խորհիք մարմինի «կրճատութեան» նկատմամբ քան հոգւոյն նուիրման մասին: Ծէսերու և արարողութիւններու մէջ կ'ապրիք, մարմնաւոր ազգաբանութեան վրայ կը պարծենաք ու արտաքին բաներու մէջ կը փնտռէք ձեր փառքը: Միթէ ասիկա փողոցի կեանք չէ: Զէ՛ այն կեանքը դոր շուները կ'ապրին: Ու ձեր այս կացութիւնը շատ աւելի արգահատելի երեւոյթ մը կը ներկայացնէ, քան զի անհունօրէն լաւագոյն բանի մը կանչուած էք: Հրաւիրուած էք ընտանեկան հանդարտ ու խաղաղ կեանքի, առատ ու ճոխ սեղանի ու հոգեւոր խնճոքի մտերմական ու շնորհալի մասնակցութեան:

Այսպէս կ'զգուշացնէ Առաքեալը իր ընթերցողները կեանքի ամենէն մոլորեցուցիչ վտանգէն, փողոցները ապրելու վտանգէն: Փողոցը տուն չէ, այլ տուն հասնելու օգտակար միջոց մը միայն: Սակայն շարունակ կը փորձուինք փողոցներու վրայ կենալու՝ փոխանակ անոնց վրայէն քալելով տուն աճապարելու: Ծիսականութիւնը փողոց մըն է որ խիստ հաճելի ու

գրաւիչ կը թուի շատերուն: Եթէ ծէսերը իբրեւ միջոցներ գործածուին ու ո՛չ թէ իբրեւ նպատակ՝ անոնք շնորհալի պատեհութիւններ կը ներկայացնեն Տէրոջ ներքին սենեակին առաջնորդելու: Սակայն այնքան կարեւորութիւն կրնայ տրուիլ ծէսերու՝ որ մարդիկ Տէրոջը ներքին սենեակը մոռնան, ու կրնան այնքան հաճոյանալ հոն առաջնորդող ճամբայով՝ որ երբեք չհասնին նպատակին: Փորձութիւն կայ որ աւելի աղօթքի ձևին՝ քան անոր հոգիին վրայ մտածենք ու աւելի հաղորդութեան սուրբ խորհուրդով՝ քան Տէրոջմով գրադինք: Այս վիճակն է զոր Պօղոս կը նմանցնէ փողոցի վրայ ուտելիք փնտռող շուներու վիճակին՝ բաղդատելով զայն երկնաւոր Հօրը հետ սեղան նստող ու Անոր առատ խնճոյքը վայելող զաւակներու վիճակին հետ:

Ուրեմն վայել է որ զգուշանանք: Չար մշակներ՝ այրեր ու կիներ, միշտ պատրաստ են, պատրաստ՝ կրօնքի հոգեւոր բարձր նշանակութիւնը նուազացնելու և մեզ ժամանակաւոր ու արտաքին օրէնքներու և պաշտամունքներու թակարդը ձգելու: Անոնք կը շեշտեն թլփատութիւնն ու ծոմը, զրապանակներն ու ձեռքերու լուացումը, սակայն չեն մտածեր այն խոնարհութեան վրայ որ գաղտնի կ'աղօթէ ու կուլայ, որ իր սուրբ սեղանը կը կանգնէ հոն՝ ուր ոչ մէկ աշխարհային շշուկ կամ գնահատութիւն կը լսուի, որպէսզի յաւիտենական Աստուծոյն ձայնին միայն մտիկ ընէ: Շատ դիւրին է աւելորդ ձայներու ուշադրութիւն դարձնելով՝ սրբութիւն Սուրբութեանցը թողուլ, կրօնքի արտաքին սենեակներու և անցքերու մէջ դեղերիլ ու նոյն իսկ փողոցին վրայ գոհացում գտնել: Ուստի Առաքեալը կը պարզէ զաւակի մը ճշմարիտ կեանքը, Աստուծոյ ընտանիքին անդամներուն բաժինն եղող ճոխ ու մտերիմ կեանքը՝ ընդգէմ փողոցի շուներուն անստոյգ կեանքին: Եթէ կ'ուզենք հոգիով Աստուծոյ երկրպագութիւն ընել, փողոցին վրայ կանգ առնելու չենք, այլ փութով յառաջանալու դէպ ի հոգոյն ներքին ու ամենասուրբ կեդրոնը: Ամեն մէկ փողոց հոն առաջնորդելու է: Իւրաքանչիւր ծէս գայն մատնանիշ ընելու է: Ամեն ծիսականութիւն, ամեն շարժում, ամեն խորհուրդ՝ Ամենակարողին ներքին սենեակը առաջնորդելու է մեզ: Նոյն իսկ Սուրբ Գիրքը ոչ թէ մեր նպատակը՝ այլ մեզ Տէրոջը առաջնորդող ճամբայ մ'ըլլալու է:

«Ու կը պարծենանք Բրիստոս Յիսուսով»: Հոս ունինք երկրորդ երեւոյթ մը որ կը յատկանշէ

ներքին կեանքը, հոգեւոր ընտանեկան կեանքը՝ ընդգէմ փողոցի կեանքին: Դուրսը ապրողներ միայն տուփեր ու արկղեր կը տեսնեն՝ փոխանակ անոնց մէջի գանձերը տեսնելու: Աւելի կը մտածեն նիւթական տաճարին՝ քան աներեւոյթ եկեղեցիին վրայ: Աւելի կը խորհին եկեղեցական առանձնաշնորհումները՝ քան հոգեւոր շնորհներու վրայ, ու աւելի կարեւորութիւն կուտան մարմնաւոր ազգաբանութեան՝ քան հաւատացեալի մը Տէրոջը հետ ունեցած խորհրդաւոր ազգակցութեան: Անոնք մարմինին կը վստահին ու մարմինին վերաբերեալ բաներով կը պարծենան: Սակայն Աստուծոյ ընտանիքին մէջ ապրող զաւակ մը ինքզինքը արտաքին բաներէ անջատուած կը գտնէ: Տէրոջը ներկայութեան մօտենալուն պէս՝ ամեն ինչ որ կը միջամտէր՝ կ'անյայտանայ: Աստուծոյ լուսապայծառ տունը հասնելէ վերջ՝ փոքրիկ ճրագներու լոյսին չենք կարօտիր: Անոնք կրնան այլեւս մարուիլ: Անշուշտ երախտապարտ կ'ըլլանք անոնց մատուցած բարերար ծառայութեան, սակայն Տէրոջը պայծառ ներկայութեան առջեւ՝ Ինք կ'ըլլայ մեր պարծանքին միակ առարկան: Երբեք չթուլատրենք որ հոգիին դահլ յափշտակուի մեր մարմինին կողմէն: Մեր խունկերը չը ծխենք այն առարկաներուն առջեւ որ մեզ կ'արգիւնեն Տէրոջը առջեւ ներկայանալու: Ան որ կը պարծենայ, Տէրոջմով թող պարծենայ:

Թարգմ. Ն. Մ.

“ԻՆՏԻ ՀԱՄԱՐ ՎԿԱՆԵՐ ՊԵՏԻ ԸԼԼԱՔ”



«Իմ բուր սրտովս քեզ պիտի գովեմ, ով Տէր, իմ Աստուծոս: Ու յաւիտեան պիտի փառաւորեմ Բու անունդ: Վասն զի Բու ողորմութիւնդ մեծ եղաւ իմ վրաս: ու Դուն փրկեցիր իմ անձս խորունկ դժոխքէն»:

(Սաղ. 22 12, 13)

Ծնած եմ 1902ին, Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ, բողոքական ընտանիքի մը զաւակ: Հայրս ծնունդէս առաջ և մինչեւ իմ մէկ տարեկան հասակս շաքաթապահ է եղեր: Այն տարիքէս ի վեր որ ես կը յիշեմ՝ անիկա ոչ շաքաթը կը պահէր և ոչ ալ Կիրակին: Բայց երբեմն Ս. Գիրք կը կարդար. զիտէր թէ սուրբ կեանք մը ապրիլ պէտք է, բայց ինքը ոչ տաք, ոչ ալ պաղ կեանք մը կ'անցնէր: Մայրս թէ եկեղեցւոյ անդամ էր, բայց վերստին ծնունդի փորձառութիւնը չունէր.

այսպէսով հանդերձ ընտանեօք այս օրհնեալ կեանքէն և Փրկչէն զուրկ կ'ապրէինք: Ես հոգեւորները կը քննադատէի ըսելով թէ անոնք կեղծաւորներ են, և թէ ցոյցի համար ձեռքերնին Ս. Գիրք կը կրեն, և մարդոց երեւնալու համար ոտքի կենալով հրապարակաւ երկար աղօթքներ կ'ընեն: Ինքս Ս. Գրքին տգէտ և Աւետարանին փրկութեան քաղցր աւետիսէն զրկուած կ'ապրէի: Կեանքս օրէ օր աւելի և աւելի կը թաղուէր մեղքի աւազախրութիւն մէջ: Աստուծոյ հեռու և մարդոցմէ անարկուած կ'ապրէի: Այսօր երբ հոգեւորապէս լուսաւորուած՝ Աստուծոյ խօսքէն գիտեմ թէ Աստուծոյ Որդին Յիսուս իբր մեծ Քահանայապետ, երկինքը անցած մեղաւորներուն համար միջնորդութիւն կ'ընէ, (Եբր. Դ 14), Աստուծոյ փառք կուտամ որ իմ տգիտութեանս ու կուրութեանս օրերուն նա ինծի համար ալ միջնորդած է:

Տգէտ և տարտամ հաւատք մը ունէի թէ Աստուծոյ կայ և մեր աղօթքները կը լսէ: Շատ մը դժուարութեանցս մէջ կ'աղօթէի, «Ով Տէր, զիս այս դժուարութիւններէն ազատէ. ալ այս աշխարհի մէջ ի՞նչ գործ ունիմ, զիս վերցուր, այլեւս ապրիլ չեմ ուզեր»: Գիտէի թէ մեռնելով դժոխք պիտի երթամ, բայց կ'ըսէի «ամէն դժոխք զացող ինչպէս որ կ'երթայ ես ալ այնպէս կերթամ». արդէն այն օրերուն ապրած կեանքս և պարագաներս ալ մասամբ դժոխային կեանք մըն էր: Այսօր փառք կուտամ Աստուծոյ որ այդ աղօթքներուն չալատասխանեց:

1920 ին, օր մը քանի մը կիներու հետ մեր տան առջևի բակը նստած էինք: Ուրիշ երիտասարդ կին մ'ալ եկաւ և սկսաւ մեզի իր քրոջ մահուան ժամուն ըսած խօսքերը կրկնել: Մանաւանդ այս մի քանի խօսքերը ինծի շատ ազդեցին, «Մայրս, եղբայրներս, քոյրերս, ես Յիսուսի քով կ'երթամ, դուք ալ ապաշխարեցէք, որպէսզի հոն միանանք»: Այս խօսքերը ինծի մտածել տուին: Ս. Հոգին իմ նիբսիզիս հարցում մը արթնցուց. «Ես եթէ մեռնիմ՝ ու՞ր պիտի երթամ»: Այս հարցումը զիս աղօթքի մղեց: Սկսայ ամէն երեկոյ աղօթել ըսելով՝ «Ով Տէր, ես ալ կ'ուզեմ երկինք երթալ»: Երկու-երեք շաբաթ ինքնիբեան այսպէս շարունակելէն յետոյ օր մը մեր տունը կին մը եկաւ, Մարիամ քոյր Մարաշլեան, մին այն քոյրերէն, զորոնք ես միշտ քննադատած էի: Նոյն ժամուն կարծես ներքին ձայն մը ինձ կ'ըսէր, «Ահաւասիկ աղօթքիդ պատասխանը»: Սիրտս ուրախութեամբ լեցուեցաւ: Մինչդեռ ցարդ զայն չէի սիրած,

բայց հիմա ներքին սէր մը բղխեցաւ մէջս այդ քրոջ հանդէպ: Անիկա և ուրիշ ոչ ոք զիտէր իմ այդ օրերու հոգեւոր արթնութեան վիճակս, քանզի մէկուն բան մը չէի ըսած: Զեմ գիտեր թէ Տէրը ինչ ըսել կ'ուզէր ինձ այն ժամուն. մեր տունը ուրիշ երկու հիւրեր ալ կային: Մարիամ քոյր քիչ մը նստելէն յետոյ առանց բառ մը ըսելու կրկին ոտքի ելաւ ու մեկնեցաւ: Սրտանց կը ցաւէի որ նա կը մեկնէր և ըսի, «ասիկա չեղաւ, ուրիշ օր մը նորէն եկուր»: Բայց աւագ որ այդ առիթը ձեռքէ փախցուցի ու յետոյ մէջս եղող փափաքն ալ մարեցաւ:

Քանի մը ամիսներ ետք հայրս հիւանդացաւ: Հիւանդութեան վերջին օրերուն նա ապաշխարեց: Մեզմէ խնդրեց որ Հոռով. Ը. զուրկ կարդանք: Շատ յստակ վկայութիւններ կուտար եւ կարծես երբեմն երկինքէն հրեշտակաց երգը կը լսէր: Մեզի երբեմն կ'ըսէր. «Լուռ կ'եցէք, երկինքի հրեշտակները կ'երգեն», և կը կենար ու մտիկ կ'ընէր: Իր ձայնը կտրած էր և ուրիշներուն երգելու տար: Յաճախ թրքերէն «Նէ գէման պօրու սէտա վէրիպ տէվրան խիթամ պուլուր» երգը երգել կուտար (Միւնիթէխապ իլահիլէր թիւ 275): Աստուծոյ այս եւ այսպէս այցելութեանց առջեւ ալ ես պաղ ու անտարբեր վիճակս շարունակեցի: Այս վիճակով Պէյրութ եկայ եւ անհոգ ու անտարբեր չորս տարի եւս շարունակեցի:

Օր մը Տէրը զիս քրոջ մը տունը առաջնորդեց. բազմոցին վրայ թերթիկ մը նշմարեցի. «Ալլահն թէրագիսի» վերնագրով. զայն առնելով կարդացի և սիրտս տակն ու վրայ եղաւ: Ս. Հոգին անգամ մըն ալ սկսաւ իմ մէջս գործել: Զիս հիւրնկալող քրոջ ըսի. «այս թերթիկը ինծի կուտա՞մ». թերթիկը ինձ տուաւ, զայն տուն տարի և կրկին ու կրկին կարդալով մեծ մտատանջութեան մէջ ինկայ: Մանաւանդ սա խօսքերը զիս կը սարսափեցնէին. «Դուն Աստուծոյ ներկայութեան միտակ պիտի մնաս»: Մեղքերուս գիտակցութիւնը և հոգեւոր ճշմարիտ արթնութեան շատ մը նշաններ կ'երեւէին վրաս: Այս անգամ սկսայ տունը գաղտուկ աղօթք ընել: «Ով Տէր, հոգիիս աչքերը բաց, որպէս զի քու ճամբաներդ հասկնամ»: Վերջապէս սրտիս մէջ փափաք ու սէր մը արթնցաւ աղօթաժողովներու երթալու: Մինչ այն իմ դատումս այն եղած էր թէ ապաշխարութիւնս և նուիրումս պէտք է տանս մէջ, գաղտուկը և միայն Աստուծոյ առջեւ ըլլայ, թէ մարդոց ներկայութեան եղած խոստովանութիւնը, վկայութիւնը և աղօթքը կեղծաւորութիւն է կամ ցուցամորութիւն: Այսպէսով ինքզինքս հա-

մոգեցի և ինքնիրենս զաղտուկ ապաշխարեցի: Բայց Աստուած իմ նախկին աղօթքիս պատասխանելով հոգիիս աչքերը բացաւ: Ես ահաայ թէ այս որոշումը իմ որոշումս էր, ինքզինքս քննելով պարապը կ'ելլեմ: Երբ հաւատացեալ մը ինծի հարցնէր՝ «ապաշխարա՞ծ ես», պատասխան չէի կրնար տալ: Օր մը երբ Ս. Գիրքը կը սերտէի՝ այս համարը ինծի շատ խոր ապաւորութիւն ըրաւ. «Արդ ով որ մարդոց առջեւ զիս կը դաւանի, ես ալ զանիկա պիտի դաւանիմ իմ Հօրս առջեւ, որ երկինքն է» (Մատթ. Ժ 32): Այս բանը ընել ինծի շատ դժուար կուգար: Բայց երբ Մարկ. Ը 38 ն ալ կարդացի՝ բոլորովին անպատասխանի մնացի. «Վասն զի ով որ զիս ու իմ խօսքերս դաւանիլը ամօթ սեպէ այս շնացող ու մեղաւոր ազգին մէջ, Որդին Մարդոյ ալ զանիկա դաւանիլը ամօթ պիտի սեպէ, երբ զայ իր Հօրը փառքովը Սուրբ հրեշտակներուն հետ»: Իրաւցնէ ես ալ Տէր Յիսուսը և Անոր խօսքերը մարդոց առջեւ դաւանիլը ամօթ կը սեպէի:

1924 մեծ պահքի եօթը շաբաթներու ընթացքին վեր. Հատիտեան քէմբի եկեղեցիին մէջ ամէն երեկոյ ժողովներ կ'ընէր: Երկրորդ շաբթուան Ուրբաթ երեկոյի շատ վախով ու դողալով և շատ արցունքով իմ մեղաւոր մը ըլլալս խոստովանելով ինքզինքս Յիսուս Փրկչին յանձնեցի: Անմիջապէս հաւատացի թէ Նա իմ մեղքերս ներեց ինծի: Բայց փրկութիւն, փրկուիլ, փրկուած բառերուն աարբեր ակնոցով մը կը նայէի և անոնք որ «Տէրոջը շնորհքով փրկուած եմ» կ'ըսէին, անոնց վրայ քիչ մը ծուռ կամ վերապահ աչքով կը նայէի:

Հոգեւոր այս վիճակին մէջ էի, երբ Ֆրանսա եկանք: Գիւղ մը դրկուեցանք, ուր բոլորովին առանձին էինք: Նախ Ս. Գրքին և երկրորդ «Մարանթա» թերթին միջոցաւ հոգեւոր կեանքի մէջ նոր քայլեր առի: Տէրոջը շնորհքով 7 — 8 ամիս այսպէս շարունակելէ յետոյ Մարսէյլ եկանք: Հոն Տէրը սրտիս մէջ զարմանալի սէր մը արթնցուց անապաշխար հոգիներու հանդէպ, թէեւ ես ինքս դեռ «փրկուած եմ» չէի կրնար ըսել: Ինձ նման անարժան հոգի մը Տէրոջը իր սէրը հասկցնելուն համար յաւիտեան փառք կուտամ: Օր մը Աննա քոյր ճիզմէճեան եփես. Բ զլուխը կը կարդար, (5-8 համարները) կարդալու ատեն թէեւ իրեն բան մը չըսի, բայց զգացի թէ ներքնապէս լոկեայն նոր քայլ մը առի. սիրտս փառաբանութեամբ լեցուեցաւ:

12 տարի կ'ընէ որ Մարսէյլ կը բնակինք, և Տէրը «այս 12 տարուայ ընթացքին իր խոստմա-

նը համաձայն ինծի սորվեցուց, խրատեց և Իր աչքը իմ վրաս եղաւ» (Սող. ԼԲ 8): Այս վկայութիւնը տալու մէջ նպատակս է որ Աստուծոյ բոլոր զաւակները զԱյն փառաբանեն, Անոր իր այս անարժան զաւակին ցուցուցած ողորմութեանը համար, որպէսզի Աստուծոյ բոլոր զաւակները արթուն ըլլան իրենց տուներուն մէջ և իրենց շուրջը գտնուած հոգիներուն հանդէպ, որպէսզի հոգեւոր թերթիկներ ցրուողները քաջալերուին, որպէսզի Մարանթայի, Բանբերի և ուրիշ հոգեւոր թերթերու յօդուած տուողները քաջալերուին, ըստ Ա. Կոր. ԺԵ 58 ի, որուն մէջ Առաքեալը կ'ըսէ «Հաստատ եղէք, անշարժ կեցէք և ամէն ատեն աւելցէք Տէրոջը գործին մէջ, զիտնալով որ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջմով:

Տէրոջը գալստեան սպասող
եփեսայի ԱՅՈՎԵԱՆ

Սէն-Լու, Մարսէյլ



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ
ԿԵՆԱՑ
ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԶԱՐԾԱՆԱԼԻ ԴԱՐՁ ՄԸ

Քաղաքի մը մէջ աւետարանչական ժողովներ կ'ըլլային: Ամէն մարդ անոնց վրայ կը խօսէր, նոյն իսկ սրճարաններու մէջ: Օր մը քաղաքին սրճարաններէն մէկուն մէջ մարդ մը ըսաւ «Ի՞նչ կայ, ասիկա մեծ բան մը չէ, ես ալ կրնամ ապաշխարութեան քարոզ մը տալ»: Անոր ընկերները խնդալու լաւ նիւթ մը գտած ըլլալուն վրայ ուրախանալով սրճարանապետին կնոջմէն կը պահանջեն որ Սուրբ Գիրք մը բերէ:

Նոր աւետարանիչը բեմը կ'ելլէ և Աստուծոյ խօսքէն քանի մը համար կը կարդայ ու կը սկսի քարոզել: Ներկաները խնդալով անոր մտիկ կ'ընէին, բայց քարոզիչը երթալով աւելի լուրջ կերպարանք մը կ'առնէր և խօսքերն ալ երթալով սպառնական կը դառնային: Ծաղրածուները ստիպուեցան լռել և ինքն ալ որ խեղդատակութեամբ սկսած էր, Աստուծոյ վեհափառութեանը առջեւ խոնարհելով Յիսուս Քրիստոսի մէջ եղած շնորհքը սկսաւ փնտռել: Նոյն ժամուն ընդունեց

ու նոր կեանք մը սկսաւ: Անոր տիրացած նոր փորձառութիւնը, կորսուածներուն հանդէպ իր մէջ աշխատի սէր մը արթնցուց, որ զինք սիրող և իր մեղքերէն լուացող Փրկչին սէրը հռչակելէն ուրիշ բան մը չէր կրնար ընել:

Տէրը զարմանալի կերպով անոր ճամբայ բացաւ և զայն իր ձեռքին մէջ օրհնեալ գործիք մը ըրաւ, այնպէս որ շատ մը հոգիներ փրկուեցան իր միջոցաւ:

ՆՈՐ ՍԻՐՏ ՄԸ

Անգամ մը, բանտի քարոզիչ մը մեծ ոճրագործի մը այցելութիւն ըրաւ: Մարդը այնքան անտարբեր վիճակ մը ստացած էր, որ իր մէջ երբեք զղջման նշոյլ մ'իսկ ցոյց չէր տար: Աստուծոյ պաշտօնեան երբ անոր յանձնարարեց որ Սուրբ Գիրքը կարդայ, — «Այս Գիրքը ինծի երբեք օգուտ մը չունի, քանզի իմ սիրտս այնքան կարծր է որ այլեւս բան մը չեմ զգար» ըսաւ ոճրագործը և իր ձեռքը դռան վրայ բաղ-խելով սիրտս այս երկաթին պէս կարծր է ու չկայ բան մը որ ինծի կարենայ ազդել» ըսաւ:

Այն ատեն Պատուելին ըսաւ. «Ուրեմն դուն նոր սրտի մը պէտք ունիս»: Այս խօսքը բանտարկեալին ուշադրութիւնը գրաւեց: «Նոր սիրտ մը, ասիկա ի՞նչ է»: Բարոզիչը իր Սուրբ Գիրքը բացաւ ու կարդաց, «Ձեզի նոր սիրտ պիտի տամ, ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ, և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ...» Եզեկ. 36. 26: Այս խօսքերը մարդուն սրտին խորապէս ազդեցին: Նա Սուրբ Գիրք մը ուզեց և կարդալ սկսաւ:

Երբոր քարոզիչը կրկին եկաւ, տեսաւ որ ոճրագործը լոկկ վիճակ մը ստացած իրեն կ'ըսէր. «Աստուած իմ մէջս իր ողորմութեան հրաշքը կատարել սկսաւ»:

Վասնզի Աստուծոյ քով բնաւ բան մը անհնարին չըլլար»: Ղուկ. 1. 37:

ԹՈՂ ԼՈՒՍԱԻՐԻ ԶԵՐ ԼՈՅՍԸ

Մատ. 5. 16

Հեռաձայնի պաշտօնեայ աղջիկ մը առաջին անգամ ըլլալով աւետարանչական ժողովի մը եկաւ և Պատգամէն ազդուելով նոր ճամբու մէջ մտաւ: Անոր հարցուեցաւ թէ ի՞նչպէս եղաւ որ սոյն ժողովին եկած է: Նա պատասխանեց «Մեր աշխատանոցին մէջ օրիորդ մը ունինք, որ հոն

եղողներուն ամենէն տարբեր է: Երբ խեղկատա-կութիւն կ'ըլլայ, նա երբեք չի մասնակցիր, բայց երբոր մէկու մը օգնելու առիթը կը ներկայա-նայ, առաջինը ինքը կ'ըլլայ ծառայելու համար: Երբ նա սրահին մէջէն կ'անցնի, մենք իրարու նայելով կ'ըսենք «Ասիկա ի՞նչպէս մէկն է, մեր բոլորէն տարբեր է»: Մօտերս այս աշխատակիցս զիս հրաւիրեց, որպէսզի այս ժողովին գամ: Անոր հարցուցի, ասիկա կրնա՞յ պատեհութիւն մը ըլլալ, որ ես ալ քեզի պէս ըլլամ: Նա ըսաւ. «Այո, ասիկա անոր համար պատեհութիւն մըն է»:

Ո՛հ, որքաննե՛ր խաւարէն լոյսի պիտի փոխուէին, եթէ քրիստոնեայ անունը կրողներուս մէջ անոնք Բրիստոսի կեանքը տեսնէին:


Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԱՆ

ՄԱՐՄԵՆԱԻՐ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ
ՀՈԳԵՒՐ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ



Աբրահամ և Ղովտ իրարու հակապատկեր եղող նկարագիրներ են: Թէև երկուքն ալ միեւնոյն սերունդէն (Ծննդ. ԺԱ 31), միեւնոյն մթնոլորտին մէջ և միեւնոյն շրջանակէն ազդուած, երկուքն ալ արդարացած մարդիկ. (Ծննդ. ԺԵ 6, Բ. Պետ. Բ 7, 8). բայց իրենց նկարագրին և կեանքի ասպարէզին իրարու հակասումը արդիւնքը ըլլալ կը թուի անոնց իւրաքանչիւրին ընտրութեան իրենց կեանքի ճգնաժամին մէջ: (Ծննդ. ԺԳ 11, 12) «Ղովտ Յորդանանու բոլոր կողմը ընտրեց իրեն... ու իր վրանը Սողոմի քով բացաւ», ներկայ շահը փնտռելով: Աբրահամ ինք կը սպասէր այն հիմերով հաստատուած քաղաքին, որուն ճարտարապետը ու Արարիչը Աստուած է», (Եբր. ԺԱ 10) «Ու եկաւ և բնակեցաւ մամբրէի (գիրութիւն) կաղնիներուն մէջ, որ Քերոնի (հաղորդութիւն) մէջ է, և հոն սեղան շինեց Տէրոջը»: (Ծննդ. ԺԳ 18) Այսպէս այս երկու մարդիկը աշխարհային և հոգեւոր հաւատացեալի տիպար կը դառնան:

Յետագային Յիսուս հրեաներուն կ'զգացնէ թէ անոնց Աբրահամի սերունդը ըլլալը՝ զանոնք Աբրահամի որդիներ չէր ընէր. «Գիտեմ որ Աբրահամի սերունդ էք... Եթէ Աբրահամի որդիներ ըլլայիք՝ Աբրահամի գործերը պիտի գործէիք»։ (Յովհ. Ը. 37-39) Բայց Յիսուսը սպաննել ուզող հրեաները մարմնաւոր հաւատացեալներ իսկ չէին, և անոնց մարմնի կողմանէ Աբրահամի սերունդ ըլլալը՝ իրենց անհաւատութեան շրջանին մէջ զանոնք Իսմայէլացիներէն աւելի արժէքաւոր չէր կրնար ընել։ Մինչդեռ հրեայ կամ հեթանոս՝ ամէն անոնք որ Աբրահամի հաւատքէն են, անոնք Աբրահամի որդիներն են։ (Գաղ. Գ 6-14) Պօղոս Առաքեալ այս ճշմարտութիւնը Հռով. Թ. 6-8 ի մէջ այսպէս կ'ըսէ. «Ոչ թէ ամէն Իսրայէլէ եղողները Իսրայէլացի են»։

Աստուած Յակոբը Աբրահամի մարմնաւոր սերունդը ըլլալէն հոգեւոր որդի ըլլալու վիճակին անցուց, զայն իր կեանքին մէջ առնուազն վեց զլխաւոր հոգեւոր փորձառութենէ անցնելով։

1 — Հաւատքի փափաքը՝ անդրանկութեան իրաւունքը զնելով. (Ծն. ԻԵ 28-34, ԻԷ 10-22)։

2 — Բեթելի երազով տեսիլքը (Ծննդ. ԻԸ 10-19)։

3 — Հաւատացեալ բայց մարմնաւոր — Ծննդ. ԻԹ 1 — ԼԱ 55։

4 — Փանուէլի փոխող փորձառութիւնը — Ծննդ. ԼԲ 24—31։

5 — Բեթէլ վերադարձը, կուռքերու վերցուիլը — Ծննդ. ԼԵ 1—7։

6 — Հաւատքի ընթացքը — Ծննդ. ԼԷ 1 — ԽԹ 33։

Հռով. Է 7—25 Պօղոսի ինքնակենսագրականն է։ Պօղոսի կրօնական փորձառութիւնը երեք զօրաւոր և որոշ փոփոխութիւններ ունեցան։

1 — Նա օրէնքին տակ Աստուածավախ հրեայ մըն էր։ Կասկած չկայ թէ Հռով. Է 7—25ը այս շրջանը չ'ակնարկէր, քան զի ուրիշ գրութիւններու մէջ նա յստակ բացատրութիւններ կուտայ ըսելով թէ այդ շրջանին նա ինքզինքը «Օւէնքին արդարութեանը կողմանէ անարատ» կը նկատէր. (Փիլ. Գ 6)։ Նա «բոլորովին բարի խղճմտանքով կեանք վարէր էր»։ (Գ. Առաք ԻԳ 1)։

2 — Ապաշխարելով նոր լոյս ստացաւ նոյնիսկ օրէնքին վրայ։ Տեսաւ թէ «օրէնքը հոգեւոր է»։ (Հռով. Է 14) և հիմա տեսաւ թէ հակառակ իր օրէնքը պահած ըլլալուն՝ ինքը օրէնքէն դատաւարտուած էր։ Նա ինքզինքը կենդանի կարծած

էր, բայց երբ իրապէս պատուիրանքը իր վրայ հասաւ՝ ինքը մեռաւ (Հ. 9)։ Մեզի ըստած չէ թէ Առաքեալը ճիշդ ե՞րբ Հռով. Է 7—25ի փորձառութենէն անցաւ, թերեւս Դամասկոսի մէջ մարմնաւոր կուրուքեան օրերուն (Գ. Առաք. Թ 9) թերեւս Արաբիայի մէջ. (Գաղ. Ա 17)։ Յամենայն դէպս այս հատուածը փորձառութիւնն է նորոգուած մարդու մը՝ որ սակայն դեռ օրէնքին տակ է, և դեռ անգիտակ է Սուրբ Հոգիին ազատարար զօրութեան։ (Հռով. Ը 2)։

3 — Յետագային Դադատացուց և Հռովմայեցուց թուղթերուն մէջ անոր զրած մեծ յայտնութիւնները կը ցուցնեն Առաքեալին երրորդ փորձառութենէ մը անցած ըլլալը։ Այս անգամ նա իր անձը «Բրիստոսի մարմինով օրէնքին մեռած» սեպեց, և իր ներսիզին բնակող հոգիին միջոցաւ «մեղքի և մահուան օրէնքէն ազատուած»։ (Հռով. Ը. 2), մինչդեռ «օրէնքին արդարութիւնը» իր մէջ («չ թէ իրմով») կը կատարուէր՝ մինչ ինքը հոգեւորապէս կը քալէր։ (Հռ. Ը 4) Հռով. Է. Գլուխը՝ վերստին ծնած և սակայն տակաւին օրէնքին տակ ապրող մարմնաւոր հաւատացեալի մը պայքարներուն և պարտութիւններուն անցեալի արձանագրութիւնն է։

Հռով. Է 14ի «մարմնաւոր» արտայայտութիւնը Պօղոսի բառն է Աղամական բնութիւնը ցուցնող, և զայն կը զործածէ այն հաւատացեալներուն համար, որոնք կը քալեն, այսինքն կ'ապրին դեռ այդ Աղամական բնութեան տակ։ Անապաշխար մարդու համար անոր զործածած յատկանշական բառը «շնչաւոր» բառն է (Ա. Կոր. Բ 14), ինչպէս որ «հոգեւոր» բառը նա կը զործածէ յատկանշելու վերստին ծնած և հոգիով քալող հաւատացեալը։ (Ա. Կոր. Գ 1, Գաղ. 2 1)։

Հաւատացեալին մէջ պայքարող երկու բնութիւնները, այսինքն հին կամ Աղամական բնութեան և նոր ծնունդով ստացուած Աստուածային բնութեան (Ա. Պետ. Ա 23, Բ. Պետ. Ա 4, Գաղ. Բ 20, Կոր. Ա 27) պայքարը՝ Պօղոս Առաքեալ ինքն իր անձով կը ներկայացնէ։ Տարսնցի Սողոս եղող «Ես»ը և Պօղոս Առաքեալ եղող «Ես»ը պայքարի մէջ են և «Պօղոս» կը պարտուի։ Հռով. Ը Գլխուն մէջ այս պայքարը Սուրբ Հոգին ձեռք կ'առնէ հաւատացեալին առ հաշիւ. (Հռով. Ը 2, Գաղ. Ե 16, 17) և Պօղոս յաղթական դուրս կուգայ։ Ասոր հակառակը Եփես. 2 12 մարմնաւոր պայքարը չէ՝ հապա հոգեւոր։



ՄԵՂԱՅ ԴԵՐԻՆԵՐ

ԱՆԳՈՒԹԸ

(Մտապատկեր)

«Եւ զայս գիտցիր որ վերջին օրերը...
մարդիկ պիտի ըլլան... անգութ...»:

Բ. ՏԻՄ. Գ 1-5

Աչքերն անոր ինձ կը թըլին սառնարան՝
Միշտ անժըպիտ, անկարեկիր եւ դաժան.
Դէմքը խոժու՝ ակօսուած դաշտ մը կըրքի,
Ուր գըթուծեան ոչ մէկ նըշոյլ կը ծաղկի:

Բերանը՝ մո՛լթ եւ գարշահոտ գերեզման,
Լեզուն՝ սըրած մահացու թուր երկբերան.
Սիրոյ ո՛չ մէկ կարեկից երգ կամ բարբառ,
Այլ՝ սոսկ ժահրոտ սուր սըլաքներ մահավառ...

Ձեռքերն անոր՝ գործիքներ են աւերի.
Ոտքերն՝ արագ մուծ եւ դըժխեմ ոճիրի,
Իսկ իր ներքին էութիւնը սառնասիրտ՝
Ապաւուած մ'է միշտ անըզգայ, խո՛ւժ եւ բի՛րտ...

Ականջները՝ գոց են յաւէտ ուրիշի,
Անոնց վիշտը՝ իրեն նըման են փուշի.
Այլոց համար ան՝ եւ ոչ մէկ սեղ ունի
Իր սըրտին մէջ՝ որ ծով մ'է սա՛ռ արիւնի...

Միտքը՝ խուժդուժ տառապանքով անդաստան,
Խիղճն՝ անխընայ յօշոտուած է անկենդան:
Սիրտը՝ ճահի՛ճ... այդ տըղմուտքին մէջ տըմոյն,
Հոգին՝ յաւերժ դարձած է խեղճ ծովամոյն...

ՍԱՄՈՒՔԼ Պ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ ՀԱՅՈՑ ՀԱՒԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՍԻՈՆԱՐՈՒԹԻՒՆ.— Նախորդ յօդուածներու մէջ տեսանք թէ ինչպէս Լուսաւորիչ Աստուծոյ զօրութեամբ յաջողեցաւ՝ Հայաստանի մէջ հալածական եկեղեցին յաղթութեան առաջնորդել: (Տես, Բանբեր 1937, մասնաւորաբար 8, 9, 11 և 12 թիւերը): Բայց հոգ չվերջանար Լուսաւորչի զորքը: Ան նպաստած է քրիստոնէութեան տարածման նաև զրացի երկիրներու մէջ: Նախ Վրաստանի մէջ:

Հոն կ'ապրէր քրիստոնէայ հայհուհի մը: Խո-

րենացիին վկայութեամբ Հռիփսիմեանց խումբէն էր և «ստարացեալ յաշխարհէ և որ 'ի սմա... բանիւ վկայ Բանին Աստուծոյ և յօժարութեամբ իւրով՝ որպէս արեամբ պսակեալ»: Կը բնակէր Վրաց մայրաքաղաքին Մծխիթայի մէջ և կը վարէր զրկալից կեանք մը և Տէրոջմէ մասնաւոր պարգեւ ստացած էր՝ աղօթքով հիւանդներ բժշկելու: Բժշկեց նաև կինը Միհրան Բղելիսի, որ ատկէ ազդուած՝ սկսաւ համակրիլ Նունէի հաւատքին: Երբ օր մը, որսի ատեն

դժուարանցանելի լեռներու մէջ թանցր մառախուղի բռնուեցաւ, վախցաւ թէ Տրդատի հանդիպած փորձանքը իրեն ալ պիտի հասնի: Ուստի աղօթքով ուխտեց՝ պաշտել Նունիի Աստուածը, եթէ նա օգը լուսաւորէր և զինք խաղաղութեամբ տուն վերադարձնէր: Իր խնդիրքը լսուեցաւ և և ինքն ալ կատարեց իր ուխտը: Սկսաւ աշխատակցիլ Նունէի՝ տարածելու քրիստոնէութիւնը: Ապա երկուքը միասին զիմեցին Գրիգոր Լուսաւորչի՝ օգնելու իրենց Վրաստանի քրիստոնէական լուսաւորութեան գործին մէջ: Ան ալ իրենց զրկեց «գլխաւոր հովիւ մը և եկեղեցական պաշտօնեաներ», որոնք սկսան աւետարանել Վրաստանը: շուտով պարտուեցաւ հեթանոսութիւնը և ամէն տեղ կանգնեցան եկեղեցիներ: Քանի որ Վրաստան գլխաւորաբար Հայաստանէն ստացաւ Աւետարանի լոյսը, անոնց կաթողիկոսութիւնը մինչև է. դար կ'ընդունէր հայոց հայրապետութիւնը իբր իր Մայր աթոռը:

Լուսաւորիչ հոգ տարաւ նաև զրացի Աղուանից մէջ տարածելու քրիստոնէութիւնը: Հոն զրկեց իր թոռը Գրիգորիս, որ ատեն մը Աւետարան քարոզելէ յետոյ հոն մարտիրոսացաւ: Բայց ետքը ուրիշներ ալ զացին ու վերջապէս այդ երկիրն ալ շահուեցաւ Քրիստոսի համար:

Այսպէս Լուսաւորիչ հայ եկեղեցին առաջնորդեց նաև միսիոնարութեան: Գործ, որ մէկ կողմէն միջոց է Աւետարանի լոյսը տանելու հեթանոսներու, իսկ միւս կողմէն միջոց է արթնութեան ու եռանդի՝ միսիոնարող եկեղեցւոյն համար: Միշտ նկատուած է որ աւելի կենսունակ են այն եկեղեցիները, որոնք իրենց լոյսը զըրուանի տակ չեն դնէր, հապա աշտանակի վրայ: Երանի՜ թէ հայ հաւատացեալները շուտով չհեղէին Լուսաւորչի այս շաղկէն: Մեր Մայր եկեղեցւոյն տկարանալուն ու թմրելուն պատճառներէն մին ալ այդ շեղումը կ'զուարէ:

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՄԱՀՔ.
Լուսաւորիչ խոր վերապէն ելլելու (301) ատեն 62 տարեկան էր: Սակայն դեռ 10 տարի գործեց երիտասարդի մը կորովով: Բայց ատկէ ետք այնքան տկարացաւ, որ այլեւս չէր կրնար առանձին կրել հայրապետական պարտականութեան ծանր լուծը: Ուստի Տրդատ երեք նախարարներ զրկեց կեսարիա և անկէ բերել տուաւ Գրիգորի երկու որդիները: Անդրանիկը Վրդանէս ամուսնացած էր, իսկ երկրորդը Արիստակէս ամուրի էր և ճգնաւորական կեանք կը վարէր: Աս իբր աւելի հոգեւոր անձ՝ իր անդրանիկ եղ-

բօրմէն աւելի առաջ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և իր հօր հայրապետական պաշտօնին օգնական նշանակուեցաւ:

Լուսաւորիչ ազատելով իր ծանր պատասխանատուութենէն՝ կարող էր ատկէ ետք աւելի ժամանակ տալ ինքնամփոփման ու աղօթքի: Արդէն սկիզբէն իվեր մեծ սէր ունէր առանձնութեան: Վերապիւն մէջ 13 տարի արդէն բնական դարձած էր իրեն աղօթքով երկար ժամեր մտերմօրէն հաղորդակցիլ իր երկնաւոր Հօր հետ: Անկէ ելլելէն ետքն ալ Յիսուսի նման յաճախ կ'առանձնանար լեռները՝ «խաղաղ մտքով ինքնամփոփուելու և անզբաղօրէն Աստուծոյ հետ խօսելու համար»: Այս առանձնացումները հետզհետէ սկսան աւելի յաճախադէպ և աւելի երկարատեւ դառնալ, մանաւանդ Արիստակէսի աթոռակից ընտրուելէ ետքը: Վերջին ժամանակները իր առանձնարանն էր Կամախ գաւառի Սեպուհ լեռը, Մանեայ այրին մէջ: «Աղօթք, սաղմոսերգութիւն, կրօնական ներշնչումներ ու խոկումներ սուրբզրական ընթերցումներ և ուսումնասիրութիւններ, — ասոնք էին հոգեւոր պարապումները այդ մեկուսացումներուն մէջ» (*):

Այսու հանդերձ չէր մոռնար ան իր հօտն ալ. կը վերադառնար յաճախ իր ժողովուրդին, կը խրախուսէր հովիւները և կ'ոգեւորէր հօտը՝ «մնալու ճշմարտութեան պատուիրանքին մէջ» (Ազաթանդեղոս): Իր քրիստոնէական խոր ու վսեմ փորձառութիւնը և ճգնարանին մէջ Աստուծոյ հետ ունեցած մտերիմ հաղորդակցութիւնները իր խօսքերուն կուտային սուրբ ազդեցութիւն մը, որուն զիմազրել քիչէր կարող էին: Եւ այս այցելութիւններով ծառայեց եկեղեցւոյն մինչև իր մահուան տարին: Վերջին այցելութիւնը, որ ծանօթ է պատմութեան, տեղի ունեցած է իր մահէն միայն քանի մը ամիս առաջ, և հետեւեալ պարագային:

Նոր էր վերջացած Նիկիոյ Կրօնական ժողովը (325), որ տեղի ունեցած էր Մեծն Կոստանդինոսի հրաւերով: Հաւաքուած 318 եպիսկոպոսներուն ճնշիչ մեծամասնութիւնը դատապարտած էր Արէոսի մոլար վարդապետութիւնը, — որ կը սորվեցներ թէ Յիսուսը Աստուծոյ մարդացեալ Որդին չէ, հապա միայն զերազոյն արարած մը, — և խմբազրած՝ «Նիկիական հանգանակը», որ մինչև այսօր ուղղադաւան եկեղեցիներու կողմէն կ'ընդունուի իբր ամփոփում քրիստոնէական

(*) Գարեգին Եսայ. Տրապիզոնի, «Աշխարհի Լոյսն» ի հոյս» էջ 182:

ուղղափառ վարդապետութեան: Արիստակէս հայ եկեղեցւոյ ներկայացուցիչն էր այդ ժողովին մէջ: Ուստի վերադարձին իրեն հետ բերած էր այդ հանգանակին մէկ օրինակը և վաղարշապատի մէջ հանդիպեցաւ իր հօրը, Լուսաւորիչի, որ ցնծութեամբ ընդունեց հաւատոյ հանգանակը և խիստ ուրախացաւ որ Աթանասիոսի ուղիղ հաւատքը յաղթած էր Արիոսի մոլար վարդապետութիւնը: Ատկէ ետք 85 ամեայ ծերունին քաշուեցաւ Մանեայ Այլը՝ հոն աղօթքով ու ճգնութեամբ իր հոգւոյն քաղցը յապեցնելու: Այդ էր վերջին երթը: Այլեւս չերեցաւ ժողովուրդին: Հազիւ քանի մը ամիս անցած՝ հովիւներ պատահմամբ քարայրը երթալով զինքը հոն գտան... մեռած: Անխնամ կերպով թաղեցին զայն՝ առանց զիտնալու թէ ինչպիսի մեծ հոգիի մը երկրաւոր բնակարանն էր անիկա: Այս վիճակին մէջ մեռնիլը կարելոք ապացոյց մըն է հայոց մեծ հայրապետի քրիստոնէական պարզամտութեան ու խոնարհութեան: Ատեն մը ետքը իր աշակերտներէն մին կ'իմանայ զէպքը և կ'առնէ իր մեծ ուսուցչին մարմինը և կ'ամփոփէ թորդանի մէջ:

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԴԵՐՆ ՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ. — Անտարակոյս նա մին է մեր եկեղեցւոյ ամենէն մեծ զէմքերէն: Շիտակ է թէ ինքը չէ անոր հիմնադիրը և սխալ է զայն իր անունովը «Լուսաւորչական» կամ «Գրիգորեան» կոչել: Մեր եկեղեցին, — ինչպէս այս յօդուածաշարքին սկիզբը տեսնք — արդէն սկսած էր առաքելական դարուն և հաւանաբար թաղէոս առաքելի միջոցաւ և հետզհետէ բաւական ալ տարածուած: Շիտակ է թէ Լուսաւորիչ քրիստոնէութեան շուտափոյթ յաղթանակին համար քուրմերու եւ հեթանոսական սովորութիւններու ըրաւ կարգ զիջումներ, եւ հեթանոսական յիշատակներու շնչումի եւ նորադարձներու մկրտութեան ատեն ալ գործածեց միջոցներ, որոնք հակառակ են քրիստոնէական կրօնի հոգւոյն եւ ուստի ծանծաղեցուցին զայն: (Տե՛ս Բանբեր 1937, թիւ 8, 9, 11 եւ 12):

Այսու հանդերձ Լուսաւորիչն էր որ Աստուծոյ ձեռքին մէջ ծառայեց իբր գործիք՝ համոզելու Տրդատն ու իր պալատականները ու հայ ազնուականութեան ու ժողովուրդին կարելոք մէկ մասը, որպէս զի անոնք հրաժարին հեթանոսութենէ և իրենց վզին վրայ առնեն Քրիստոսի քաղցը լուծը: Ան էր որ Տրդատի հետ միասին կոտրեց հեթանոսութեան գէթ արտաքին ազդեցութիւնը և յաղթական հանդիսացուց փրհա-

մարհուած ու հալածական քրիստոնէութիւնը: Վերջապէս ան էր որ հայ եկեղեցւոյն տուաւ այնպիսի դիրք մը, որու շնորհիւ ետքը Ներսէս ու Սահակ Պարթեւներու և Մեսրոպներու համար դիւրին պիտի ըլլար լրացնել պակասը և ճշմարտութիւնը փնտռող ո եւ է հայու համար բաց ճամբայ ձգել զէպի Քրիստոս: Նոյն բաց ճամբան չունեցան դրացի Քիւրտն ու Պարսիկը:

Եւ Տէրը կրցաւ Լուսաւորիչը գործածել այդպիսի բարձր դերի մը համար, քան զի նա սորված էր ապրիլ ու դործել ոչ թէ իր անձին, հապա Քրիստոսի համար: Սորված էր աշխարհի փառքէն ու իր մարմնոյ հանդիստէն նախապատիւ համարել Քրիստոսի չարչարանքը: Սորված էր փոխանակ իր ուշիմ մտքին բնական կարողութիւններուն վստահելու, ապաւինիլ Անոր, որ «յոգնածին ուժ տուաւն է և տկարին զօրութիւնը»: 13 ամեայ վիրաւային կեանքը բարձր դպրոց մը եղած էր իրեն համար՝ ցուցնելու իրեն թէ ինքը թէեւ իր ուժովը բան մըն ալ չկրնար ընել, բայց Քրիստոսով ամեն բանի կարող է: Միայն թէ ինքը պէտք է ժամանակ տայ աղօթքով շփման գալու այդ ամենակարող ուժի մարտկոցին հետ: Ահա գաղտնիքը Գրիգորի յաճախակի առանձնացումներուն: Ատ իրեն համար ուժ ամբարել էր մեծ պարտականութիւններուն կատարմանը համար:

Ընթերցող, Աստուծոյ այս մեծ ծառայէն սորվինք մենք ալ երթալ խաչի ու նուիրման ճամբայէն և ժամանակ տալ աղօթքի ու առանձնութեան, այն ատեն Տէրը պիտի զիտնայ մեզ ալ գործածել իր տաճարին մէջ իբր կենդանի ու պատուական քարի:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷԻՆ ՄԱՅՐԸ

Բ.

«Եգիպտոս բնակող երրայական ցեղերուն մէջ» կ'ըսէ Կիլիքի, «Ղեւիի ցեղը կը թուի թէ սկիզբէն իսկ ինքզինքը տուաւ յատկապէս այդ բարձրագոյն մշակոյթին, որ կը տիրապետէր իրենց բոլորափքը, և առաջնակարգ դիրք մը ապահովեց, ինչպէս աստիճանով մը իբր քահանայական դասակարգ: Ուրիշ տոհմեր հարկաւ քիչ թէ շատ նուիրուեցան զիտութեանց և ար-

ուեստներու, որ կը ծաղկէին նեղոսի հովիտին մէջ, — նկարչութեան, քանդակագործութեան, ոստայնանկութեան, ներկարարութեան, թանկագին քարեր ու մետաղներ բանելու. բայց ամէնքը Ղեւիին պարտական էին զրել կարգալը եզրիպտացիներէն որդեգրելուն և այդ բարձրագոյն իմաստութեան նկատմամբ, որ երեւութապէս այս ցեղին միայն թողուած էին: Ասոնց թուոյն մէջ էին Ամրամ և Յոքարէդ...: Այս երկուքին ամուսնութենէն ծնան մեծ առաջնորդներ, — Մարիամ, Ահարոն և Մովսէս...: Իրենց մօր անունը միայն կը բաւէ ապացուցանել թէ այդ ընտանիքը հաւատարիմ մնացած էր իրենց ցեղին ժառանգական հաւատքին և տակաւին կը փարէր Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուծոյն պաշտամունքին, ինքզինքը հեռու պահելով եզրիպտական կոապաշտութենէն ու ապականութենէն: Այս կնոջ պաւակները պէտք է որ սրբասուն բարոյականի և ասեռութեամբ պաշտութեան մթնոլորտի մը մէջ մեծցած ըլլային, որ կարենային զարգացնել այդ նկարագիրը, զոր յետոյ ի յայտ բերին: Բայց ներշնչեալ հեղինակներուն համար ամենէն գերազանց մարդկային էակը սոսկ փոշի և մոխիր էր Ամենակարողին քով, ուստի զիտմամբ զգուշացած են տալէ մանրամասնութիւններ, որոնք զուցէ կրնային տանիլ հերոսապաշտութեան մը, որ անհաշտելի է միմիայն Աստուծոյ անկ եղող բացարձակ ու անբաժան երկրպագութեան հետ: Այնպէս որ այս նշանաւոր ընտանիքին անձնական պատմութեան մասին շատ քիչ գիտենք: (C. Geekie, Hours with the Bible, II. p. 89-91).

Մովսէս ծնաւ հաւանօրէն ն. ֆ. 1527 ին, երբ Եզրիպտոսի վրայ թողմէս Ա. կը թագաւորէր: Փարաւոնը Մովսէսի ծնունդէն քիչ առաջ հրաման մը հանած էր, որ երբայեցիներէն ծնած ամէն մանչ երախայ նեղոս գետը ձգուի: Ուստի երբ Մովսէս ծնաւ, (այնպէս կ'երեւի թէ մանկաբարձ մըն ալ չկանչուեցաւ մանկան ծնունդին), իր ծնողքը տեսնելով թէ երախան չափազանց գեղեցիկ է, խղճացին զայն գետը նետելու, խորհելով որ այսչափ գեղեցիկ տղայ մը անպատճառ Յովսէփին պէս բարձր ապագայի մը սահմանուած պիտի ըլլայ և պարզամտօրէն յուսաւով որ Աստուած հարկաւ կերպ մը պիտի գտնէ զայն պահպանելու: Այսպէս երեք ամիս տան մէջ ծածուկ պահեցին (Գործք. է 20: Եբր. ԺԱ 23): Բնականաբար ամենէն աւելի Յոքարէդն էր որ մանկան խնայելու համար մայրական սրտի զորովէն բռնադատուած թագաւորին անիրաւ հրա-

մանին անաստելու յանդգնութիւնն ըրաւ. ուստի Ելից Գիրքը (Բ 2) իրեն միայն կը վերագրէ ամբողջ գործը: Զարմանալի է թէ ինչպէ՞ս կերպը գտան այդչափ ժամանակ երախային ձայնն անլսելի ընելու և այսպէս անոր զոյութիւնը ծածկելու զրացիներուն մէջի մատնիչներէն և կառավարութեան լրտեսներէն: Տան մէջ թէ՛ ցնծում և թէ՛ ցաւ կար. մանչը այնչափ գեղեցիկ էր որ խանդակաթ ժայրն ուրախութենէն կուլար իր նոր զանձին վրայ, բայց միանգամայն կը սարսափէր՝ մտաբերելով Փարաւոնի անգութ հրամանը, որ զայն մահացման կը դատապարտէր այդ վայրկեանին որ անոր զոյութիւնը երեսն ելլէր: Շաքաթներ անցան, և քանի երախան կ'աճէր զօրութեան ու գեղեցկութեան մէջ, օրէ օր առաւել սիրելի կ'ըլլար մտատանջ մօրը սրտին, մինչդեռ ծածկելու խնդիրն ալ ամէն օր կը զժուարանար: Տարակոյս չկայ թէ Յոքարէդ շարունակ Աստուծոյ առջև կուլար ու կ'աղօթէր: «Դիւրին գործ մը չէր՝ ինչպէս կրնանք հաւատալ», կ'ըսէ թէյլըր, «իրենց երախան ծածուկ պահել երեք ամիս: Այս կը պահանջէր անշնչել լուակացութիւն, մեծ աշարջութիւն և տուայտիչ մտավախութիւն: Կրնանք ըմբռնել թէ ինչպէս հայր ու մայր զաղտնապահ եղան: Բայց ինչպէս կրնար Մարիամ իրեն պահել պղտիկ նորեկին զաղտնիքը, և ինչ կերպով կրցաւ Ահարոն ետ պահուիլ իր նոր եղբօր վրայով բերնէն դժբախտ խօսք մը փախցնելէ: Այս փոքրիկներուն խոհեմութիւնն ուշագրաւ է, և կ'արժէ որ օրինակ ըլլայ մեր պաւակներուն, որոնք ոչ քիչ անպամ ատանին զաղտնիքները բոլոր իրենց ընկերներուն բերանը կը ձգեն»: Այս պարագան ալ ապացոյց մըն է թէ ո՛րչափ հնազանդ, բարեկիրթ ու կարգապահ ընտանիք մըն էր Ամրամին ու Յոքարէդին ընտանիքը:

Սակայն Մովսէսին մայրը, երբ վերջապէս տեսաւ թէ անկարելի է տղան մշտապէս ծածուկ պահել և ակամայ ստիպուած էր գետը նետելու, ուրիշ զարմանալի ծրագիր մը յղացաւ: Գրեթէ իբրեւ ներշնչումով յանկարծ իր մտքին մէջ ծագած այս զաղափարը բոլորովին զբաւեց իր սիրտը, որով աճապարեց վայրկեան մ'առաջ զայն գործադրել իր գտեր Մարիամի օժանդակութեամբ:

Յոքարէդ ալ պատրաստեց տապանակ մը պրտուեղէն (այսինքն՝ հիւսուած պապիրոս անուն մէկ մատ հաստութեամբ, եռանկիւն ցօղունով, երբեմն 10—15 ոտնաչափ երկար, և պամպու եղէգին պէս թեթեւ ու ամուր սէգէն, որմէ մե-

ծամեծ նաւակներ անգամ կը շինէին Նեղոսի հովիտին բնակիչք, եսա. ԺԸ 2). կպրով ու ձիւթով ձեփեց զայն, որպէս զի մէջը ջուր չթափանցէ, և հարկաւ ներսը փռեց մի քանի թեթեւ ու փափուկ բաներ ալ: Ապա մինչ գիշեր էր տակաւին և ճամբաներն ամայի, իր դեռ քնացող մանչուկը գետեղելով տապանակին մէջ, իր դստեր Մարիամին հետ արտորաց գետեղերքը դողդոջուն քայլերով ու սրտատրոփ, և հոն լուռ աղօթքով զանի Աստուծոյ նախախնամութեան յանձնեց:

Պատմութեան մնացածը լաւ գիտենք: ԺԸ. հարստութեան օրով Եգիպտական արքունիքը տարուան մէկ մասը կ'անցընէր Տայանիս քաղաքը (Սաղ. ՀԸ 43), հին Ասաբիսի շատ մօտ, իսկ մնացածը՝ Վերին Եգիպտոսի մէջ վաղեմի թերէ մայրաքաղաքը: Ուրիշքինսընի հրատարակած մէկ պատկերէն յայտնի է որ հին Եգիպտոսի մէջ բարձրաստիճան տիկիներն ալ սովոր էին լոգնալ Նեղոսի մէջ, իբրեւ կրօնական արարողութիւն մը թերեւս: Նաև Եգիպտաբանական խուզարկութիւններով ապացուցուած է թէ Նեղոսի արեւելեան բազուկը, որուն վրայ Տայանիս քաղաքը շինուած էր, այն ատեն ալ ազատ էր կոկորդիլոսներէ. որով թէ՛ Փարաւոնի աղջկան հոն լոգնալուն և թէ՛ Յոքաբէղին իր մանուկն աղբտեղի շամբերուն մէջը դնելուն մէջ վտանգ մը չկար:

Մովսէսի մայրը հաւանօրէն գիտէր արդէն թէ Փարաւոնի աղջիկը լոգնալու համար հոն զալու սովորութիւն ունի, և դիտմամբ տապանակը հոն դրաւ: Մովսէսը ջուրէն ազատող «Փարաւոնի աղջիկը» ամենայն հաւանականութեամբ Հիւթ-շէփսութ նշանաւոր իշխանուհին էր, Թոդմէս Ա.ի դուստրը և Թոդմէս Բ.ի քոյրն ու կինը, բայց անգուակ: Սակայն Յոքաբէղին դառնանք նորէն: Փարաւոնի աղջիկն անոր ըսաւ. «Ս'ո այս տղան» որ սնուցանես ինծի համար, և ես քու վարձքդ կուտամ»: Այսպէս, մանուկը դարձեալ իր մօրը յանձնուեցաւ, ու մատաղ տարիքին մէջ անոր խնամքին տակ մեծցաւ: Վա՛րձք: Եթէ իշխանուհին գիտնար սիրաւ անոր՝ որուն հետ կը խօսէր, վարձատրութեան մասին խօսելու պէտք չէր ունենար. քան զի ի՛նչ բան կրնար աւելի ուրախարար ըլլալ Յոքաբէղին քան իր պզտիկին վերադարձուիլը մայրենի բազուկներուն, սա վստահութեամբ թէ ինք այսուհետեւ կրնար զայն իր սրտին վրայ սեղմել և ամէն մարդու ցուցնել առանց ու եւ վախի: Իր սրտահատորն ապահով էր այլեւս Փարաւոնի աղջկան իսկ պաշտպանութեամբ: Վեր. Ե. ՔԱՍՈՒՆԻ (Շար.)



ՊԱՏԱՆԵՍ
Քանի մը յանձնարարութիւններ պատանի քրիստոնեաներու
ՃՕՐՃ ՄԻԻԼԸՐ

Յիսուս տարիներէ ի վեր Տէրը ճանչնալու և Իրեն ծառայելու համար կ'ուզէի օգնել իմ երիտասարդ եղբայրներուն և քոյրերուն պատմելով իմ անձնական անկումներէն և փորձառութիւններէն:

Նախ եւ առաջ կ'ուզէի իրենց ուշադրութիւնը կեդրոնացնել Սուրբ Գիրքը կարդալու կերպին վրայ:

Ինչպէս մարմինի աճումը յառաջ կուգայ սննդարար կերակուրներով, նոյնպէս հոգեւոր կեանքին աճումը աղօթքով, Ս. Գրքի ընթերցումով և մտածութիւնով: Երբ զաւակներ պէտք եղած սնունդը ընդունելու մէջ զանց կ'անուին, չափահասութեան չեն հասնիր: Ուրեմն կարեւոր է կեանքին սկիզբը հարկ եղած սնունդն ընդունիլ: Ի՛նչ է այս սնունդը քրիստոնեային համար: Աստուծոյ խօսքին կամը: «Նորածին մանուկներու պէս բանական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որպէս զի անով մեծնաք մինչեւ փրկութիւնը» կ'ըսէ Պետրոս առաքեալ (Ա. Պետ. Բ. 2):

Դուք կ'ըսէք թէ այս ինչ գրքին կամ այն ինչ թերթին ընթերցումը ձեզի օգտակար եղած է: Անտարակոյս: Բայց որքան որ Աստուծոյ խօսքը գործածէք, այնքան աւելի կը զօրանաք:

Յոյժ կարեւոր է Ս. Գրքին մէկ ծայրէն մինչև միւս ծայրը կանոնաւորապէս կարդալ: Մի թղթատէք Ս. Գրքին էջերը հոս կամ հոն կարդալու, այլ բոլորը կարդացէք: Ասիկա կ'ըսեմ ձեզի իմ անձնական փորձառութենէս, 46 տարիներ Աստուծոյ խօսքը այսպէս կարդացած և շատ օրհնութիւններ վայելած ըլլալովս: Իմ ապաշխարութեան առաջին տարիներուն մէջ այսպէս չըրի ես, նոյնիսկ թէ եւ քարոզիչ, բայց շատ քիչ յառաջ գացի հոգեւոր կեանքի մէջ: Բայց Աստուած հաճեցաւ իմ մէջս մեծ փափաք մը արթնցնել Ս. Գրքին հանդէպ, որմէ յետոյ ես սիրեցի և գնահատեցի զայն:

Ձեզմէ շատեր կը կարդան Աստուծոյ խօսքը, բայց ես կ'ըսեմ անոնց որոնք չեն կարդար: Սիրելիներ, սկիզբէն սկսեցէք, — Հին կտակարանէն, և երբ մէկ երկու գլուխ կադադած էք, նշան :

դրէք հոն, ուրկէ պիտի շարունակէք ընթերցումը: Յետոյ առէք Նոր Կտակարանը և նոյնպէս ըրէք ու հետզհետէ բոլոր Ս. Գիրքը կարդացած կ'ըլլաք: Ետքը նորէն սկսեցէք: Այս շատ կարեւոր է, վասնզի ասանկով կրնաք ըմբռնել մէկ գրքին ու միւսին, մէկ զլուսին և միւս զլուսին միջեւ եղած յարաբերութիւնը:

Երբ մեր հարուստ ազգականներէն մէկը մեռնելու ըլլար, կը գոհանայինք իր կտակէն մաս մը միայն կարդալով: Ոչ, կ'ուզէինք բոլորը զիտնալ: Այսպէս պէտք է վարուինք Աստուծոյ Յայտնութեան գրքին հանդէպ: Ս. Գիրքը հերթով կարդալու կերպը գմեղ կը պահէ ինքնայատուկ ծրագիր մը շինելէ. յենլով այս կամ այն ճամարտութեան վրայ, որ մասնաւորապէս մեր ուշադրութիւնը կը գրաւէ: Աստուած կ'ուզէ որ մենք բոլոր ճամարտութիւնը զիտնանք, և Աստուծոյ դաւակը հետաքրքրուի Ս. Գրքի բոլոր մասերովը: Այս ծրագիրը կարելոր է մանաւանդ անոր՝ որ Յիսուսի համար կ'աշխատի: Այս կերպով պիտի սիրենք Աստուծոյ խօսքը և երբեք պիտի չյոգնինք զայն կարդալէ: Ես հօթանասուն տարեկան եմ, ու շատ տարիներէ ի վեր է որ ապաշխարած եմ: Եւ թէպէտ հարիւր անգամ կարդացած եմ Ս. Գիրքը, բայց կրնամ ըսել թէ երբեք չյոգնեցայ ամէն օր կարդալով: Բայց պէտք է կարդալ աղօթքով:

Չը կարծենք թէ մենք բաւականաչափ իմաստուն ենք Ս. Գիրքը անձամբ հասկնալու, ուրեմն Ս. Հոգւոյն օգնութեանը դիմենք խնդրելով որ ինք մեզ լուսաւորէ: Քրիստոնէսայ մը իմ ուշադրութիւնս հրաւիրեց այս կէտին վրայ 1829ին և ես որոշեցի փորձել զայն: Սկսեալս կը մոտէի, դուռը պոցելով ծունկի կուգայի: Հոն քանի մը ժամ աղօթելով և Աստուծոյ խօսքին վրայ խոկալով կ'անցնէի: Վերջապէս հաստատեցի թէ այս քանի մը ժամերուն մէջ աւելի սորվեցայ քան թէ առաջին քանի մը ամիսներուն մէջ: Կ'ընդունիմ թէ Ս. Հոգիէն սորվեցայ և ասիկա ինծի մեծ օրհնութիւն եղաւ: Ուստի մի զարմանաք եթէ ձեզ լրջօրէն կը խորխուսեմ այս բաներուն վրայ:

Բայց բաւական չէ միայն կարդալու ատենը աղօթել, հապա պէտք է նաեւ խոկալ: Եթէ միայն կարդաք առանց մտածելու անոր վրայ, ձեր ընթերցումը կը նմանի ջուրին մէկ կողմէն միւսը հոսելուն:

Եթէ չէք կրնար քանի մը ժամ խոկումի յատկացնել, գոնէ քիչ մը ժամանակ տուէք և այս խոկումը թող անձնական ըլլայ: Շատ ան-

գամ մենք ուրիշներուն համար կը կարդանք. ծնողքներ իրենց զաւակներուն և զաւակները ծնողաց, քարոզիչները ժողովուրդին, Կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչները իրենց աշակերտներուն: Տխուր կերպ մըն է այսպէս Ս. Գիրք կարդալը: Կարդացէք զայն բուն իսկ ձեր անձնական հոգիին համար, և երբ օրհնութիւն մը ստանաք, այն ատեն կրնաք զայն ուրիշներուն ալ հաղորդել: Ինչ ալ ըլլայ ձեր պաշտօնը, Հովիւ կամ աւետարանիչ և կամ Կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչ, ուրիշներու համար մի կարգաք, հապա դուք ձեզի հարցուցէք, այս խօսքը իմ կեանքիս ո՞ր կէտին կը վերաբերի, ի՞նչ դաս կրնամ սորվիլ այս կարդացածէս, ու այն ատեն պիտի կրնաք նաեւ սորվեցնել ուրիշներուն:

Ուրիշ կէտ մըն ալ, որու կ'ուզեմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել, հաւատքն է, որ պէտք է ընկերանայ Ս. Գիրք կարդացողին:

Մի կարգաք զայն որպէս հետաքրքրական պատմութիւն մը կամ եղելութիւն մը, որուն կրնաք հաւատալ եթէ ուզէք, կամ «ո՛չ» եթէ չէք ուզեր, այլ կարդացէք իբր Աստուծոյ կամքին յայտնութիւնը: Այսպէս հաւատքով ընդունելով զայն՝ պիտի սնանիք ու զօրանաք:

Վերջապէս, եթէ Աստուած օրհնէ մեզ իր խօսքը կարդալուն մէջ, կ'սպասէ ալ որ մենք զայն զործնականացնենք մեր կեանքին մէջ: Եթէ այս պարտականութիւնը զանց առնուած է, մնացածը օգուտ մը չընէր մեզի: Աստուած հնազանդ զաւակներ կ'ուզէ: Յիսուս ըսաւ, «Եթէ դուք այս բաները գիտէք, երանելի էք, եթէ ասոնք կատարէք»: Եթէ Աստուծոյ կամքը կատարելու մէջ պակսինք, չենք կրնար սպասել Անկէ եկած օգնութեան: Ջանաք Աստուծոյ խօսքը կատարողներ ըլլալ:

Ես կը խօսիմ երիտասարդ քրիստոնէաներու, որոնք դեռ հասկցած չեն այս բաներուն զօրութիւնը: Ջանացէք այս նշանակակէտին հասնիլ: Ստանան կ'ուզէ որ Ս. Գիրքը մէկզի դնէք, բայց պահեցէք զայն և կատարեցէք ինչ որ կ'ըսէ ձեզի, նկատելով զայն որպէս Աստուծոյ սուրբ կամքը: Յիշեցէք թէ անոր մէջ գրուած են ինչ որ պէտք է մեզի զիտնալ Աստուծոյ, Յիսուս Քրիստոսի և Սբ. Հոգիին զօրութեան, մեր երկնային ճամբորդութեան, ապագայ կեանքի երջանկութեան ու մէկ խօսքով մեր քրիստոնէական կեանքի մասին:

Ուրեմն սերտենք Աստուծոյ խօսքը մեր բոլոր սրտովը, աղօթքով, մտածութեամբ, հաւատքով և հնազանդութեամբ:

(Թրգմ. Քրս.)

Ա. ՊԱՏԱՔԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Պերլինի մէջ Ս. Մատթէոսի Բողոքական եկեղեցիին պատուհաններէն մէկին նաւակատիւքը տեղի ունեցած է, ուր Յիսուս 12 տարեկան՝ ներկայացուած է որպէս խարտեաշ մագերոյ մանուկ մը որ նաշխական բարեւը կուտայ Երուսաղէմի Հրեայ վարդապետներուն:

ՀԻԹԼԷՐ, ԿՈՉՈՒԱԾ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՄՔԻՆ ՅԱՅՏԵՈՒԹԻՒՆԸ

Գերմանիոյ քաղաքներէն մէկին դատարանը պատուելի մը 6 ամսուան բանտարկութեան դատապարտած է, այն ամբաստանութեամբ որ իր ժողովուրդին խորհուրդ տուած է չմասնակցիլ «Հրեաներուն դէմ եղած պարտաւանքին», նաև աղօթքի մը մէջ ըսած ըլլալուն. «Աստուած պահէ հալածուած խեղճ Հրեայ ժողովուրդը»:

Դատական վճիռներէն մէկը հետեւեալը կ'ըսէ. «Führerը նոյնպէս այս աշխարհի այն մեծերէն մէկն է որ Աստուած իր ժողովուրդին և ամբողջ աշխարհի համար մեծ առաքելութիւններ յանձնած է և եկեղեցիին պարտականութիւնն է ոչ թէ ընդդիմանալ, այլ քարոզել Աստուծոյ կամքը որ անով (Հիթլերով) կը յայտնուի:

ՀԻԹԼԷՐԻ ՈՒՂՂՈՒԱԾ ԱՂՕԹՔ

Գերման երիտասարդաց մասնաւոր ընկերութեան մը անդամները հետեւեալ աղօթքները կ'ուղղեն Հիթլերի.

Ճաշերէն առաջ կ'ըսեն, «Մեր Führerը որ մեզի տրուած է Աստուծոյ կողմէ, պահէ մեզ մինչեւ մեր օրերուն վախճանը: Դուն փրկեցիր Գերմանիան ամենասուկալի տագնապէն, քեզի է որ կը պարտինք մեր ամէն օրուան հացը: Օգնէ մեզի և մեզ մի լքեր, ով Führer, մեր լոյսը և հայրը»:

Ճաշերէ հտք կ'ըսեն, «Մեր Führerը, շնորհակալ ենք քեզմէ այս ճաշին համար որ դուն մեզի տուիր: Երիտասարդութեան պահապան, ծերին մխիթարիչ, հանգչէ ապահովութեան մէջ»:

ՍՈՒՄԱԹՐԱՅԻ մէջ աւելի քան յիսուն տարիներէ ի վեր «Րայնիշ Միսիօն» անունով գերման միսիոնարական ընկերութիւն մը Պաթադ-

ներու մէջ կը գործէ: Վերջին ժամանակներու մէջ սկսած միսիոնարական ընկերութեանց ամենամեծ միսիոնարական եկեղեցին հոս է: Ան 380.000 եկեղեցւոյ անդամներ ունի և կարելիութիւն կայ որ բոլոր ժողովուրդը Քրիստոսի շահուի: Միսիոնարութիւնը վերջին տասը տարիներու ընթացքին հակառակ իր տնտեսական նեղութեան, իր գործը մեծցուցած է: Ասիկա կարելի եղած է տեղացի քրիստոնեաներու աւետարանին տարածման համար պարտականութիւն զգալովը:

ՆՈՐ ԿՈՒԻՆԻԱՅԻ մէջ ալ բոլոր ցեղերը իրենց դռները միսիոնարներու բացած են: Հոս մէջտեղ եկած եկեղեցիները Քրիստոսի աւետարանը ուրիշ «Փափուհներուն մէջ եռանդով կը տարածեն: Անոնց մասին տրուած տեղեկագրի մը մէջ այսպէս կը յիշուի. «Յարգանքով պէտք է նայինք այս քրիստոնեաներուն, որ այս ժողովուրդներուն գործաւորներ կը զրկեն ու անոնց պէտքերը կը հոգան և գործաւորներն ալ իրենց կեանքովն ու խօսքովը իրենց ազգակիցները ճշմարտութեան համար կը համոզեն»:

Նոր Կուինիայի լեռնաբնակ քրիստոնեայ գիւղերուն ժողովուրդը որոշեց որ միսիոնի կայարանը դալով միսիոնարներուն յանկարծական ուրախութիւն մը պատճառէ և ասիկա յաջողութեամբ կատարեց ալ: Անոնք երբ կայարանին մօտեցան, իրենց գօտիները և խոտեղէն գոգնոցները շտկեցին ու շարուելով դէպի գառի վեր մազլցելու սկսան. միսիոնարութեան շէնքը կը գտնուէր բլուրին զապաթը: Իւրաքանչիւր այր մարդու ուսին վրայ ծանր պայուսակ մը կար և կին մարդու ճակտէն դէպի կոնակը ծանր տոպրակ մը կը կախուէր: Անոնց կ'առաջնորդէր այս պատմութիւնը ընող միսիոնարին օգնականներէն մին: Նա միսիոնարներուն յայտնեց թէ հունձքի շնորհակալութիւնը մատուցանելու եկած են: Անոնք կարգաւ եկան և իրենց նուէրները հանելով մէջտեղ դրին: Ասոնք իրենց արտերուն բերքն էր: Ասոնց դէղը երթալով կը մեծնար և տակաւին Աստուծոյ օրհնութեանց համար շնորհակալութեան ընծայ բերողներուն շարքը լինցած չէր: Այս դէպը անխօս քարոզ մըն էր Սաղ. 50, 23ին վրայ: «Շնորհակալութիւն մատուցանողը զիս կը փառաւորէ»: Տակաւին քիչ տարիներ առաջ անոնք մարդակեր, վայրենի պատերազմողներ էին և ուրիշները այս կերպ ուրախացնելը չէին գիտեր, բայց Աւետարանը անոնց մէջ սքանչելի փոփոխութիւններ յառաջ բերած է:

ԲԱՅ ՆԱՄԱԿ “ԲԱՆԻԵՐԻ” ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Քրիստոսով սիրելի եղբայրներ,

«Բանբեր»ի Փետրուարի թիւին մէջ մեզմէ բաժնուող մեր սիրելի մեծ եղբոր Վեր. Ա. 2. Եղոյեանի մասին գրուածները ցաւով միեւնոյն ատեն մեծ ուրախութիւնով եւ հետաքրքրութիւնով կարդացի:

Ես անձամբ ճանչցած եմ հանգուցեալը, քիչ թէ շատ, երկար ստարիներէ ի վեր եւ իրեն հանդէպ մեծ յարգանք ունեցած եմ: Տէրոջս փառք կուտամ որ սոյն գրութիւնները անոր բարեմասնութիւններն ու կարողութիւնները եւ Տէրոջը խօսքին, գործին եւ անմահ հոգիներուն հանդէպ իր ունեցած սէրն սէ կորովը շեշտեցին, որոնք արդիւնքն էին, Հօր Աստուծոյ եւ մեր սիրելի Փրկչին ու Սուրբ Հոգւոյն իր մէջ եւ միջոցաւ գործելուն:

Ես անձնապէս սոյն գրութիւններէն օգտուեցայ եւ ինծի ու գործունէութեանս համար դասիր առի, կը յուսամ թէ ընթերցողներէն շատերուն համար ալ օգտակար եւ օրհնարեւր եղան: Ինչպէս ինծի, նոյնպէս բոլոր ընթերցողներուն համար ալ աղօթեցի որ Տէրը այս գրուածները շատերուն համար օրհնութեան միջոց մը ընէ եւ իր Սուրբ անունը փառաւորէ:

Խմբագրութեանդ «Բանբեր»ի սոյն թիւը գրեթէ ամբողջութեամբ Տէրոջը այս ծառային յատկացնելը խիստ գնահատելի է: Որով հանգուցեալին հանդէպ իր ունեցած յարգանքին ու երախտագիտութեանը հետ յայտնելով հանդերձ անոր գաղափարակից ըլլալը, շեշտեց անգամ մըն ալ պատուելիին ողջամիտ վարդապետութեանը հաւատարիմ ու Յիսուսի քաջարար արեամբը եղած փրկութեան քարոզիչ մը ըլլալը: Նոյնպէս կրկին առիթը տուաւ մեզի տեսնելու թէ Տէրը Իրեն թողորովին յանձնուող, վստահող եւ հետեւող մէկուն մը մէջ եւ միջոցաւ ինչ կրնայ ընել:

Այս առթիւ կ'ուզեմ խմբագրութեանդ երկու թելադրութիւններ ընել¹: Եթէ հանգուցեալը ունի անախ պրութիւններ եւ քարոզներ, շատ փափաքելի է որ զանոնք ձեռք անցնէիք եւ մերթ ընդ մերթ թերթիդ պատուական էջերուն մէջ հրատարակէիք որ կարդայինք: 2. Նաեւ կ'ուզէի առաջարկել «Բանբեր»ի ընտանիքին՝ եթէ դուք ալ յարմար կը տեսնէք, Վեր. Ա. 2. Եղոյեանին հանդէպ մեր ունեցած երախտագիտութիւնը գործնականապէս ալ ցոյց տայինք մեր փոքրիկ նուիրատուութեամբը, իր հաեւը թողուցած սիրելի ընտանիքին ղոյզն օգնութիւն մը մատակարարելու: Արդ, իմ տարեդարձիս առթիւ կ'ուզեմ ձեզ ղրկել 50 Ֆրանք² իբր շնորհակալութեան ընծայ առ իմ Երկնաւոր Հայրս, միեւնոյն ատեն իբր գործնական նշան մը իմ երախտագիտութեանս առ իմ հանգուցեալ սիրելի մեծ եղբայրս:

Քրիստոսով ձեր եղբայրը ***

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Ուրախութեամբ անդ կուտանք սոյն նամակին, որ գեղեցիկ սրտի խոր զգացումներու թորգումանն է:

Հայ հաւատացեալներ քիչով կամ շատով, «Բանբեր»ի ընտանիքը մասնաւորապէս երախտաւորաւ են Վեր. Ա. 2. Եղոյեանի: Այս երախտիքը գործնականապէս յայտնենք, ինչպէս կ'ուսուցարկէ մեզի նամակագիրը: Ուրեմն ընթացք տալով այս առաջարկին, կը հրաւիրենք բոլոր հաւատացեալները եւ «Բանբեր»ի ընտանիքը, իրենց ընդունած օրհնութեանց համաձայն նաեւ տալ մեր սիրելի Հօր ընտանիքան պարագաներուն: Վեր. Եղոյեան ապահովագրուած չէր: Ո՛չ երկրային հարստութիւն ունէր, ո՛չ ալ անոր փափաքող մըն էր: Անիկա Ղեւտացի մըն էր, որուն ժառանգութիւնը Տէրն էր: Նոյն կերպով անած է անոր արժանաւոր կինը՝ Տիկին Եղոյեան, այսու ամենայնիւ մեզի կ'իյնայ Աստուծոյ մէկ զօրավարին ընտանիքան պարագաները բանի մը կարօտ չթողուլ: Լսեցինք թէ պատուելիին ճիշդ թաղման օրը արդէն յանձնախումբ մը կազմուած էր՝ Բալեթօրնիոյ մէջ այս մասին մտածելու: Ուրեմն մեզի կ'իյնայ որ մենք ալ մեր պարտքը կատարենք: «Բանբեր» ուրախութեամբ յօժար է իր միջոցաւ զրկուած բոլոր գումարները իսկութեամբ հասցնելու իրենց նպատակին: Բարեգէտօրէն թերթիս Փետրուարի թիւը (Վեր. Եղոյեանի կեանքը) 250 օրինակ աւելի ապած ենք եւ պատրաստ ենք զանոնք արտոնագրելու անոնց, որոնք այս նպատակին համար կ'ուզեն գործածել:

Խմբ. «Բանբեր»ի

2. Ծովուն ալիք կը բարձրանայ
Կ'ազգարարէ «Փետան կ'ուզայ»
Լեռներն ձորերն կ'արձագանգեն
«Լոկ Ինքն է արժանի թագին»:

Օ'ն, արթընցէք ճամբան շտկել
Եւ ձայնեցէք հրգն անարգել,
«Անցաւ խաւարն, լոյս է ահա՛,
Տեսէք, տեսէք, Փետան կ'ուզայ»: (Կրկ.)

3. Լսէ երգին ձայն փրկելոց,
Որոնք փառք տան Փրկչին իրենց,
Եւ մերթ յայտնեն սրտի բաղձանք,
«Տէր, ե՞րբ պիտի փոխուի այս կեանք»:

Հրեշտակին փողն հնչէ վերէն
Դաշտ, ձոր եւ բլուր արձագանգեն,
«Եղա՛ւ, թող երջանիկ ըլլայ
Հարսն անհամբեր. Փետան կ'ուզայ»: (Կրկ.)

4. Յայնժամ Սիօն զերթ լուսաշող
Պճնեալ հարսի մի՛ սպասող,
Տեսնէ խաչեալ նախկին Տէրն այն
Այժմ գայ հլօր Իր պետութեան:

Ու բերկրանքով ինքն ալ ձայն տայ,
«Դու Տէր Տէրանց, Քեզ Ովսանա՛
Աղբիւ՛ր շնորհաց սուրբ երկնատուր
Ո՛վ Թագաւոր-Փետայ, եկո՛ւր»: (Կրկ.)

